

ԱՆԻՆՏԱՐԻՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly **AVEDAPER**, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԵ

Կ. ՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 13, 1912

ԹԻՒ 28



ՎԵՐ. ՅԱԿՈՒ ՊԻԻԼՊԻԼԵԱՆ

(ՏԷ ԿԼ 658)



ՀՈՐԻԶՈՆԸ

ԳՈՐԾԱԻՌՈՒՆԵՐՈՒ ԱՊԱ-
ՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ . Հետեւեալը մէկ մասն է շահեկան տեսակցութեան մը , զոր Լոնտոնի Տէյլի Գրոնթը Ազատական թերթին խմբագիր Ռ. Տոնըլա ունեցած է Անգղիոյ Ելեւմտական նախարար մեծանուն Մր. Լոյտ Ճորճի հետ .

ԽՏԷ՝ ԳԻՐ . Կը տեսնեմ թէ ապահովագրութեան ձեր ծրագիրը իբրև օրէնք քուէարկուելէն շատ առաջ պատրաստած էիք : Չէ՞ք կարծեր թէ ժողովրդին անկարելի է անմիջապէս ըմբռնել զայն իր ամբողջութեամբ : Ասկէ առաջ այդ գրութեամբ օրէնք հաստատած էք առանց հանրային կարծիքի նախապատրաստութեան :

Նախարար . Ծրագրին պէտքը սաստիկ մեծ էր , ուստի ժամանակէն առաջ հաստատուած օրէնք մը չկրնար սեպուիլ : Հանրային կարծիքի նախապատրաստութենէն առաջ եղած կրնար ըլլալ , եթէ անոր քուէարկումէն ետքը առաջին տարուան մէջ Խորհրդարանի լուծում մը սպասած ըլլայինք : Ժողովուրդը կրնար մերժել զայն բացարձակ թիւրիմացութեան հետեւանքով : Ատոր համար համոզեցի կառավարութիւնը որ յետաձգէ օրինագծին մատուցումը : Արդարեւ ես ծրագիրը պատրաստած էի Երեսփ. Ժողովի ներկայացուելէն տարի մը առաջ : Սակայն կառավարութենէն խնդրեցի չներկայացնել զայն ընտրական ընդհանուր գործողութենէն առաջ : Կրնար ըլլալ որ ընտրողները սարսափէին անոր ընդարձակութենէն , ինչպէս արդէն իսկ ձեռնարկուած է հիմա սարսափեցնել զանոնք : Բարեբախտաբար հիմա հանրային կարծիք մը կայ , վասն զի հանրութիւնը պատեհութիւն ունեցաւ օրինագիծն ուսումնասիրելու և աղքատներու համար անոր օգուտները գնահատելու :

ԽՏԷ . Գործաւորներու ո՞ր դասակարգը մեծագոյն օգուտը պիտի քաղէ , կը կարծէք , այդ օրէնքին տրամադրութիւններէն :

Նախ . Դիւրին չէ որոշ ըսել թէ օրինակի համար արճեստաւորը աւելի կանուխ պիտի զգայ անոր օգուտը քան վաճառատան պաշտօնեան կամ երկրագործական աշխատաւորը , կամ թէ խանութի , գործարանի և լուսացարանի , ևն . մէջ աշխատող գործաւորուհիները աւելի պիտի օգտուին քան տան սպասուհիները : Ամուսնացեալ կիները սակայն շուտ պիտի տեսնեն թէ իրենց ի՞նչ անհաշուելի բարիք բերած է այն : Անգղիոյ մէջ տարին մէկ միլիոն մանկիկ կը ծնի այնպիսի պայմաններու տակ որ անոնց բարգաւաճման նպաստաւոր

չեն և հետեւապէս աղետաբեր են ազգին և անգութ հարուածներ մայրութեան : Ի՞նչ պիտի ըլլայ այսուհետեւ : Ամէն ապահովագրեալ անհատ , երբ մանկիկ մը ծնի իր ընտանիքին մէջ , մէկուկէս Անգղ. ոսկի պիտի ստանայ ապահովագրութեան սնտուկէն , սնունդ և խնամք հայթայթելու համար նորածնին մօր : Անշուշտ հազարն տարբերութիւն պիտի ընէ այս ոչ միայն մայրին , այլ և մանկիկին համար : Այն գործաւորուհիներն ալ , որ ապահովագրեալ են , և այսպիսի շատեր կան , ոչ միայն իրենց ամուսնին մէկուկէս ոսկին պիտի ստանան , այլ և իրենց պատկանեալ մէկուկէս ոսկին : Ըսել է թէ պիտի ունենան 3 Անգղ. ոսկի : Մենք կ'ուզենք այս կիներուն ամէն դիւրութիւն ընծայել որ շատ շուտով չվերսկսին աշխատիլ : Դրամը մայրին յատկացուած է , որպէս զի ան կարենայ մայրութեան իր նուիրական պաշտօնը կատարել պարտաւարտչաձ կերպով և վերջ գտնէ մանկական մահերու ամօթալի այն կոտորածը , որ կը շարունակէ երկար ժամանակէ հետէ :

ԽՏԷ . Օրինագիծն ի՞նչ ծառայութիւն պիտի ընէ հիւանդութենէ , զոր օրինակ , հիւժախտէ , տառապողներուն :

Նախ . Հիւժախտը այս երկրին ամէնէն ահաւոր ախտերէն մին է և կ'ապառէ պետութեան ոյժերը : Ամէն տարի 70-80 հազար կեանք կը խամրեցնէ և այդ ալ 15-40 տարեկաններէն , այսինքն մեծագոյն արդիւնաւորութեան չըջանին մէջ գտնուողներէն : Ահա առաջին անգամն է որ պետութիւնը ձեռնարկեց կասեցնել այդ հարուածը : Գերմանիոյ ապահովագրական դրութիւնը շատ լաւ արդիւնք տուաւ այս պայքարին մէջ : Մեր օրինագիծը նոր հորիզոն մը կը բանայ հիւժախտաւոր գործաւորին առջև : Անով կը հաստատենք մենք բովանդակ երկրին մէջ ապաստանի քաղաքներ , ուր կրնան անոնք փախչիլ : Մէկուկէս միլիոն Անգղ. ոսկի կը յատկացնենք ապաքինարաններու շինութեան , մէկ միլիոն ալ անոնց պահպանման : Հիմա որ գործաւորը պիտի կրնայ բժշկական խնամք վայելել , ախտը ժամանակին պիտի ճանչցուի , հիւանդը ապաքինարան պիտի տարուի , և ժամանակին տարուածներուն ստուար մէկ մասը քանի մը ամիսէն պիտի բուժուին : Լոկ Լոնտոնի մէջ տարին 4 միլիոն Անգղ. ոսկիի թոշակ կը կորսուի հիւժախտի երեսէն : Ասոր մեծ մասը այսուհետեւ պիտի փրկուի , վասն զի գործաւորը տուն պիտի վերադարձուի իբրև յարմար ու կարող քաղաքացի և ոչ իբրև քայքայեալ թշուառ արարած :

ԽՏԷ . Ուրիշ ի՞նչ պիտի ընէ Ազատական կու-

սակցութիւնը ժողովրդին ընկերային վիճակը բարելաւելու համար :

Նախ. Ընկերային վերակազմութիւն, հասարակ դասակարգերու կացութեան բարելաւում: Միլիոնաւոր մարդիկ այնպիսի պարագաներու մէջ կ'ապրին, որոնց ոչ մէկ քաղաքակիրթ ժողովուրդ հանդուրժելու է: Ընկերային բարեկեցութիւն հարկ է ձեռք բերել տուներու բարեօրմամբ, հողերու ազատագրմամբ և տղայոց լաւագոյն հոգատարութեամբ: Այս երկրին պապական ամբողջովին տոգոյմէ կախեալ է, և, աւագ, անոնցմէ շատեր միասնեակ ընակարաններու մէջ կը մեծնան և չըջապատուած են հոգեկործան ազդեցութիւններով: Հինգ վեց անդամով ընտանիքներ մէկ սենեակի մէջ կը խճողուին: Ի՞նչպէս կրնան անոնք լաւ քաղաքացիներ ըլլալ այս պայմաններուն տակ: Ես փողոցի տղաքը ազգային մեծ հարստութիւն կը սեպեմ, և պարտական ենք անոնց փայլուն ապագայ պատրաստել, եթէ պիտի ըլլան անոնք արժանաւոր ատաղձներ որոնցմով պիտի կերտուի այս մեծ պետութեան շէնքը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՈՐԾ

Մենք կ'ուզենք որ Աւետարանը որ ըստ օրէ աւելի ծառայէ իբրև այս երկրի Հայ Աւետ. եկեղեցիները իրարու կապելու և մրացնելու միջոց մը: Ասոր համար եկեղեցիներէն թախանձագին կը խնդրենք մեզի ժամանակ ժամանակ լուր դրկել իրենց եկեղեցային կեանքին մէջ պատահող շահեկան ամէն ղէպքերու վրայ: Քոյր եկեղեցիներ այս կերպով տեղեակ պիտի ըլլան ուրիշ տեղերու անցքերուն, և աւելի բարձր ու աւելի լաւ ծառայութեան ներշնչում պիտի ստանան, կը յուսանք: Ուրիշ երկրներու մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծայուի յարանուանութիւններու միջեւ եկեղեցական լուրերու տարածման: Բազմաթիւ լրագիրներ ու հանդէսներ կան, որոնց գոյութեան գլխաւոր նպատակներէն մին այս է, և ձեռք բերուած արդիւնքը կ'արժէ սոյն աշխատութեան տրուած ամբողջ ժամանակը և դրամը: Աւելի խորագէտ ու անդադար զգալու ենք թէ միմեկ չենք: Մէն մի եկեղեցի անգամ է եկեղեցիներու մեծ խումբի մը, որոնց ամէնն ալ նոյն նպատակով կ'աշխատին և նման նեղութիւններ ու փորձութիւններ կը կրեն: Իրարու վիճակին կը շահագրգռուինք և իրարու յաջողութեան համար աւելի պիտի աղօթենք: Կը յուսանք թէ հովիւներ ու եկեղեցիներ այս տեսակէտով իրենց նուիրական պարտականութեան

մաս պիտի համարին Աւետարանի էջերուն միջոցով իրենց փորձառութիւններուն, ուրախութիւններուն և տխրութիւններուն, իրենց ձախորդութիւններուն և յաջողութիւններուն: Կազորդ ընել ուրիշ տեղերու իրենց եղբայրները:

«Մեր յոյսն ու վախն են հաւասար, նաեւ խնդում զըւարթարար, Մեր մըտմըտուք, հոգ, նեղութիւն, Չունին բընաւ տարբերութիւն»

Յաճախ և իրաւամբ ըսուած է թէ եկեղեցիի մէն մի անգամ մասնաւոր պարտականութիւն մը ունենալու է իրեն սեփական, որ անտեսուած պիտի մնայ, եթէ ինք չկատարէ զայն: Արդ եթէ ամէն եկեղեցիի մէջ անհատ մը որոշուի իբրև մեր թերթին թղթակից, որու գործն ըլլայ եկեղեցական լուրերն հաղորդել, այդ որոշուած անձը կարելուր գործ մը պիտի ունենայ ընելու և պիտի զգայ պատասխանատուութիւն մը, որ հիմա չկայ առ հասարակ: Քանի մը եկեղեցիներու մէջ այս գործն ի հարկէ պիտի վիճակի երէցին կամ երեսցուհիին, բայց ուր որ կարելի է՝ աւելի աղէկ է որ ժողովրդին մէկ անդամը կամ անդամուհին ընտրուի ատոր համար: Փորձառութիւնը ցոյց տուած է թէ այս կերպով աւելի շահեկանութիւն յառաջ կը բերուի: Զերմագէտ կը խընդրենք եկեղեցիներէն ու չի ուշով ինկատ առնել այս խնդիրը և փութով լուծուած մը տալ անոր:

Հոս կը պարտաւորինք զգացնել թէ այսպիսի թղթակիցներու անուանման անհրաժեշտ հետեւութիւնը սա պիտի ըլլայ որ եկեղեցին կամ անոր հետ կապակցութիւն ունեցող ընկերութիւնները տեղեկագրուելու արժանի բան մը ընեն: Հարկաւ այս ջնշանակեր թէ բան մը կատարուելու է, սոսկ որպէս զի Աւետարանի մէջ ծանուցուի, այլ թէ եկեղեցին անդադար պիտի յիշէ իր պարտականութիւնը և քաջալերուի գործադրել զայն՝ մտածելով թէ եկեղեցիները սովորական պաշտօններու կատարումէն աւելի բան մը կ'ակնկալին և թէ անոնք պիտի մնասուին ու պարտաւորուած յառաջդիմութիւնը պիտի չկրնան ընել ընդհանրապէս, երբ ուրէ մասնաւոր եկեղեցի թերանայ ընդհանուր գործին մէջ իրեն ինկած բաժինը կատարել: Մասնաւոր ուրախութեամբ պիտի արձանագրենք եկեղեցիի և կիրակնօրեայ դպրոցներու անդամներու յաւելումներ և ազօթամտողութիւնը, ներքին և արտաքին առաքելութիւններու, կրթական գործի և երիտասարդներու ու երիտասարդուհիներու յատուկ աշխատութիւններու հանդէպ շահագրգռութիւն աւելցնող նոր ու օգտակար մեթոտներ: Ե-

ընդատան, դպրոցի, եկեղեցիի նման նոր շէնքերու կառուցումը կամ պէտքը լաւ է ծանուցանել: Մանաւանդ պիտի ուրախանանք արձանագրելով մեր եկեղեցիներուն այն ձեռնարկները որոնց նպատակն է երկրին ընկերային ու անտեսական ընդհանուր պայմանները բարւոքել: Ահա գործի ասպարէզ մը, որ Քրիստոնեայ մարդոց առաջնորդութիւնը կը պահանջէ բարձրաձայն: Յիշենք օրինակի համար այս երկրին ահաւոր աղքատութեան համար դարմաններ, դորձաւորներու հանդէպ անխրաւութեան բարձում, կիներու և տղայոց պաշտպանութիւն, հիւժախտի աճողի պատուհասին և ուրիշ հիւանդութիւններու դէմ մաքառում, մանուկներու մէջ մահու կոտորածի խտրանում, փոսկայութեան կամ գինեհատութեան գործ, բարոյական անմաքրութեան մէջ ինկած այրերու և կիներու վերականգնում, բանտային բարենորոգում և ընկերային բազում ուրիշ հարցեր որոնց լուծումը ստիպողական դարձած է: Թէեւ այս մեծ խնդիրներուն լուծումը եկեղեցիին ուղղակի գործը չէ, շատ սերտ ազդեցութիւն ունին անոնք եկեղեցիին կեանքին վրայ, այնպէս որ այսօր այս հարցերուն չհանգրգողող ունէ եկեղեցի ոչ միայն կը թերանայ ուրիշներու հանդէպ իր պարտականութիւններուն մէջ, այլ և անհաւատարիմ կ'ըլլայ Աստուածային իր Տէրոջ և անտարբեր իր իսկ բարօրութեան: Ունէ եկեղեցի որ անտարբեր կը մնայ մարդկային այս բարձրադաս կարօտութիւններուն դէմ յանդիման, կամ որ յոռեգոյն եւս է, ներքին վէճերով կ'ըզազի, մեծ ոճիր կը գործէ Աստուծոյ և մարդոց առջեւ, մինչ ուրիշներու կարօտութիւնները հոգալով իրենք զիրենք մոռցող հովիւներ ու եկեղեցիներ առատ օրհնութիւն կ'ստանան վերէն: Կրկին կ'ըսենք թէ կը փափաքինք օգտակար ըլլալ Քրիստոնէական գործի ամէն տեսակներ արձանագրելով:

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Ունինք յաղթական կեանք մը: Մեզ պաշարող մեղքերուն կը յաղթենք: Ամէն օր աւելի յատակ կը տեսնենք սրբութեան գեղեցկութիւնը և աւելի կը ցանկանք անոր: Ամէն օր աւելի խորապէս կ'ըզգանք թէ մեզառից են մեր սիրտերը և թէ մենք բացարձակապէս անկարող ենք ունէ բան ընել մաքրելու համար մեր կեանքը: Ինչպէս է մեր ներքին վիճակը, մեր հոգեւոր այն անտեսանելի կեանքը, որ միայն մեզի և Աստուծոյ ծանօթ է: Նկարագրի մեծ պայքարին մէջ յաղթական ենք թէ պարտութիւն կը կրենք:

Այս հարցումները կ'ուզենք, վասն զի ամէն ալ հակամէտ ենք ընթանալ տոանց որոշ գաղափար ունենալու նկատմամբ մեր ուղղութեան: Ոչ ալ հոգ կը տանինք դիտել թէ կը յառաջդիմենք թէ ոչ: Այնչափ դիտելն է շատանալ սա տարտամ դադալարով թէ մենք ուրիշներէ գէշ չենք և արդարեւ լաւագոյն ենք քան մեր բարեկամներէն ու ընկերներէն շատեր:

Սակայն պատճառ կայ վախնալու թէ, եթէ քաջութիւնն ունենանք ճշմարտութիւնը դէմ յանդիման դիտելու, զարմացմամբ պիտի տեսնենք որ մեր երեւակայածէն իսկապէս շատ վար կը զտնուէնք զարգացման սանդուխին վրայ: Պիտի տեսնենք որ մեր հանապազօրեայ մեղքերը, բարկութիւն, ցանկութիւն, հպարտութիւն, անմաքրութիւն և այլն, հիմա փոխանակ տկարացած ու նուազած ըլլալու, աւելի զօրացած ու աւելի տիրապետած են մեր վրայ քան ասկէ տարի մը առաջ: Եւ եթէ մեր աչքերը կերպով մը բացուին ու տեսնենք մեզ ինչպէս ենք իսկապէս և ոչ ինչպէս կ'երեւակայինք մենք մեզ, սա ճշմարտութիւնը պիտի չողայ մեր առջեւ ու թափանցէ մինչեւ մեր հոգիին խորերը թէ ամէն օր կը յաղթուինք կեանքի մեծ պայքարին մէջ և փոխանակ յաղթանակ տանելու պարտութիւն կը կրենք:

Մինչեւ իսկ եթէ մեր կեանքը համակ ձախողուած չէ, մինչեւ իսկ եթէ կը տեսնենք թէ յառաջդիմութիւն կայ ընդհանուր առմամբ, յաճախ կը պակսի յաղթանակի այն ցնծութիւնը, խնդրութեան այն զգացումը զոր ունենալու ենք:

Արդ եթէ հարցնենք թէ ինչ է ասոր պատճառը, զրեթէ ստուգապէս սա պատասխանը պիտի տրուի թէ այս կամ այն կերպով ջանադիր եղած ենք մեր անձնական ուժով ապրիլ: Աշխատած ու մաքառած ենք մեր մեղքերուն յաղթել մեր կամքերուն ջանքով: Սա դադալարն ունեցած ենք թէ մեր կողմէ քիչ մը եւս աշխատութիւն, և ահա յաղթութեան պիտի փոխուի պարտութիւնը: Քրիստոսի ապախնած ենք մեր մեղքերուն թողութեան համար, և հաւատացած ենք թէ անոր շնորհքով ազատուած ենք մեր չար անցեալէն: Սակայն այնպէս չարժած ենք որպէս թէ մեր հոգիներուն ներկայ և ապագայ փրկութիւնը մեր անձնական ճիգերէն կախեալ է: Անչու շտ օրնութիւն խնդրած ենք Քրիստոսէ, բայց այդ աղօթքն իսկ, եթէ պահ մը կանց անենք ու դիտենք զայն, կը յայտնէ մեր միաքերուն իրական դիրքը այս հարցին հանդէպ: Սա է այն: Մենք պիտի կատարենք գործին ծանր մասը, մենք պիտի վարենք

պայքարը, բայց թոյլ կու տանք որ Քրիստոս մեզի օգնէ: Մէն+ ենք կարեւոր գործիչը, Քրիստոս կը ներկայանայ իբրեւ մեր ծառան, եթէ չէք կարծեր թէ կացութեան հաւատարիմ նկարագրութիւնն է այս, անկեղծօրէն փորձեցէք դէթ մէկ օր Քրիստոսի գերագոյն դիրք մը սալ ձեր կեանքին մէջ: Քսանըչորս ժամ նկատեցէք զայն իբրեւ ձեր փրկութեան առաջնորդը և ձեզ իբրեւ անոր օգնականը, և ահա պիտի զարմանաք տեսնելով թէ որքան անգիտակցօրէն սովոր էիք դուք ձեր անձը դնել այն գահուն վրայ ուր Քրիստոս պարտ էր բազմիւ: Այս ճշմարիտ է ոչ միայն մեզի դիմադրելու մասին, այլ և սրբութեան ետեւէ ըլլալու մասին: Թէեւ մարդոց առջեւ խոնարհաբար իսկ խօսինք մեր կարողութիւններուն և մեր գործին վրայ, քիչ չենք հպարտանար մեր արարքներուն վրայ և շատ կը դժկամակիւնք մեզի աննպաստ քննադատութիւններ լսել ուրիշներէ: Վասն զի մեք ենք պերճ քարոզը խօսողը կամ այրին ու որքը այցելողը, մենք տուինք աղքատին նպաստ կամ ըրինք ուրիշ բարեգործութիւն մը, որու համար մեծ փոյթ ունինք որ մեր անուամբ արձանագրուի: Դարձեալ, կը տեսնէք թէ բանը նոյն է, անձը գահուն վրայ փառաւորուած և Քրիստոս մեզի սպասաւորելու համար ղենջակաւորուած:

Ի՞նչ է դարմանը: Կարելի՞ է ապրիլ այն կեանքը որ միշտ յաղթութիւն կը շահի: Կրնանք յաղթական ըլլալ հոս և հիմա:

Նոր Կտակարանը, այսինքն գիրքը զոր մեր կեանքի ուղեցոյցը կը դաւանինք, «Այո» կ'ըսէ այս հարցումներուն և կը ցուցնէ թէ ի՞նչպէս ի գլուխ կը հանուի և կը սեփականուի այս մեծ փրկութիւնը: Պատասխանը պարզ ու բաւարար է: Սա է լոկ. Ինքն իսկ Քրիստոս իր Աստուածային զօրութեան բոլոր լեցունութեամբ յօժար է դալ ու մեր մէջ բնակիլ, այնպէս որ կեանքը այնուհետեւ մերը չըլլայ, այլ իբր, և այս նկարագրապէս ու բացարձակապէս: Ինք պիտի յաղթէ մեր մէջ մեղքին, ինք պիտի կատարելագործէ իր սրբութիւնը մեր մէջ, ինք պիտի փրկէ մեզ, բացասապէս ու դրապէս, այն փառաւոր ու կատարեալ փրկութեամբ զոր ամբողջ մարդկութեան համար պատրաստեց: Թող Քրիստոս ձեր կեանքը ըլլայ, և անշուշտ պիտի յաղթէք: Դադրեցէք ձեր իսկ ջանքով ու որոշմամբ ուղիղ նկարագրի մը տիրանալ փորձել: Դադրեցէք նկատելէ զՔրիստոս իբրեւ ձեզմէ դուրս դասնուող տիպար մը, որու նայելով պիտի ձեւակերպէք դուք ձեր կեանքը: Դադրեցէք ողբալէ ձեր անցեալ ճախողութիւնները և

ձեր երկրաւոր վիճակին դժուարութիւններն ու նեղութիւնները: Հաւատացէք թէ Քրիստոս իրօք պիտի ընէ ինչ որ այնքան անգամներ խոստացած է ձեզի: Ոչ միայն պիտի բնակի ձեր մէջ, ձեր կեանքը պիտի ըլլայ: Ինք կրնայ և կ'ուզէ ձեզ փրկել հոս ու հիմա, եթէ միայն թոյլ տաք իրեն: Քրիստոսնէական կեանքին և բոլոր անոր խնդիրներուն գաղտնիքը Քրիստոս է: Յաղթական կեանքը Քրիստոսի կեանքն է: Ուրիշ չկայ:

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԸ ԱՄՕԹ ՉՍԵՊԵԼ

«Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը, վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար» Հոովմ. Ա. 16:

Հոգեգալուստէն յետոյ հաւատացեալներու դէմ յարուցուած հալածանքը պատճառ եղաւ Քրիստոսնէութեան տարածումին:

Հալածուած Քրիստոսնէաներ դացին Պաղեստինի սահմաններէն անդին, և ճշմարտութեան սերմերը ցանցին օտար հողերու վրայ:

Ահա այսպիսի հալածուած Քրիստոսնէաներ էին հաւանաբար, որ գացին մինչեւ Հոովմ. ու հոն հաստատեցին եղբայրութիւն մը, որ իր կարգին հիմը կազմեց ապագայ մեծ եկեղեցիի մը:

Հոովմէն եկող ճամբորդներ քաջալերական լուրեր կը բերէին այս նորակազմ եղբայրութեան նկատմամբ: Այս լուրերը կը հասնէին մինչեւ Պօղոսի ականջը, ու անոր մէջ կ'արթնցնէին զօրաւոր փափաք մը երթալու և տեսնելու Հոովմի եղբայրները:

Պօղոս քանի անգամներ մտադրած էր, ինչպէս իր թուղթէն կը տեսնուի, երթալ Հոովմ, բայց ամէն անգամին ալ արգիլուած էր: Եւ ահա այս պատճառով իսկ կը գրէ իր պատուական նամակը, Հոովմայեցեաց թուղթը՝ որուն մէջ կ'ընէ այս նշանաւոր յայտարարութիւնը, «Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը, վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար»:

Այս յայտարարութեան մէջ երեք կէտեր կան նկատառութեան արժանի: Ա. Պօղոսի Աւետարանը: Բ. Աւետարանը ամօթ չսեպելը: Գ. Աւետարանը ամօթ չսեպելու պատճառը:

Ա. Պօղոսի Աւետարանը. Պօղոս իր թուղթերուն մէջ յաճախ կը գործածէ «Աւետարան» բառը: Բայց անոր Աւետարանը չէ ան զոր մենք այսօր առ հասարակ կը հասկնանք:

Աւետարան մեզ համար կը նշանակէ այն գիրքը որուն մէջ արձանագրուած կը գտնուի Յիսուսի կեանքը :

Սակայն գիրքը բուն Աւետարանը չէ, Աւետարանին արձանագրութիւնն է : Աւետարանը Քրիստոսով եղած իրութիւնն է : Ու Աւետարան կոչուած չորս կենսագրականներ գրուած են Յիսուսի վրայով, ցոյց տալու համար միայն թէ մեղաւորներուն փրկութիւնը ապահովուած է Յիսուսի մահով :

Ահա պօղոսի Աւետարանը այս եղած է :

Անոր թուղթ առ Հռովմայեցիսը գրած ատեն դեռ չորս Աւետարաններէն ոչ մէկը գիրի առնուած էր . հետեւաբար անոր Աւետարանը գիրքէն աւելի անոր «ի՛նչ, պատմութիւնէն աւելի անոր հոգի» կը կոչուէ : Եւ իրօք ալ Պօղոսի քարոզութեան միակ նիւթը Քրիստոսով փրկութիւնը, «Սաչեալ Յիսուս»ը եղած է :

Բ. Աւետարանը ամօ՞ն չե՞ղելու : Պօղոս պարծանքով կը յայտարարէ, «Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը» :

Պօղոս Աւետարանէն ամօթ չզգար, այլ զայն իր պարծանքի առարկան կը համարի, ու զայն քարոզելը՝ իրեն փառք :

Պօղոսի կեանքը ապացոյց է իր այս յայտարարութեան ճշգրտութեանը : Ան բոլորովին նուիրուած էր իր Աւետարանին, և իրօք ոչ մէկ արգելք զինքը զատել կարողացած է անկէ : Կարօտութիւններ, նեղութիւններ, հալածանք և մինչեւ իսկ մահը ոչ ինչ կրցին ընել իրեն պաղեցնելու համար զինքը Աւետարանէն : Պօղոս այնչափ փարած մնաց Աւետարանին և անոր քարոզութեանը : Ան մինչև վերջը վեր բռնեց Աւետարանին դօշը քաջ զինուորի մը նման . ու կնքեց իր մահկանացուն Աւետարանի պատգամը շրթունքներուն վրայ :

Եւ ի՛նչ հակապատկեր է որ կը ցուցադրեն այսօր շատ Քրիստոնեաներ : Որքան ամօթ կը զգան անոնք Աւետարանէն : Տես սա մարդը . կիրակի օրով ծախու առած միսի կտորը ձեռքէն կախած տուն կ'երթայ համարձակ, բայց ամօթ կը համարի Աւետարանը ձեռքը առած եկեղեցի երթալ : Նայէ սա տիկնոջ . հպարտ կը զգայ իր մարմինին ամէն այլանդակ ձեւեր տալով ու զարդարելով ինքզինքը ամէն տարօրինակութիւններով, սակայն ամօթ կը սեպէ Աւետարանը իր մեծագոյն զարդը համարել :

Այս ի՛նչ մեծ փոխութիւն : Այսպէ՞ս պիտի վերաբերուէին Քրիստոնեաներ Աւետարանին հանդէպ : Պէտք չէ՞ր որ այսօր ալ բոլոր Քրիստոնե-

աներու փառքն ու պարծանքը կազմէր Աւետարանը, և ամէնքը բարձրարարառ յայտարարէին աշխարհի, «Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը» :

Գ. Աւետարանը ամօ՞ն չե՞ղելու : Պօղոս պարծանքով կը յայտարարէ, «Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը» :

Պօղոս իր յայտարարութեան վերջին մասին մէջ ցոյց կու տայ այդ պատճառը : Ահա իր խօսքերը . «Վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար» :

Աւետարանը Աստուծոյ զօրութիւնն է :

Աստուծոյ զօրութիւնն է ան փրկութեան գործին մէջ յայտնուած :

Ի՛նչ բարձր ըմբոսնում է աս՝ Աւետարանի նկատմամբ :

Իցի՛ր թէ բոլոր Քրիստոնեաներ և մասնաւորաբար Աւետարանի պաշտօնեաներ այս գիտակցութիւնը ունենային Աւետարանի ընթացիկ մասին . ահա այն ատեն իրենց վրայէն պիտի նեւտէին թմրութիւնը և պիտի թօթափէին ամօթը, և ահա այն ատեն Աւետարանը իրապէս փառքն ու պարծանքը պիտի ըլլար հաւատացեալներու :

Աստուծոյ զօրութիւնն է ան : Ուստի յաջողութիւնը անխուսափելի է . վերջին յաղթանակը Աւետարանինն է : Եթէ Աստուծոյ զօրութիւնն է ան, ուրեմն ո՞վ կը վարանի անոր համար գործելու : Ահա ապագայի փառաւոր յաղթանակները Աւետարանի համար պահուած են . բոլոր ազգեր վերջապէս պիտի խոնարհեցնեն իրենց զուլանքը անոր առջեւ : Ուրեմն ո՞վ կը քաշուի Աւետարանը վեր բռնելէ, և Պօղոսի նման յայտարարելէ, «Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր Աւետարանը, վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար» :

Ուրեմն, ով Աւետարանի անձնուէր պատօնեաներ, սորվեցուցէք ամէնուն թէ Աւետարանը իր մէջ կը կրէ Աստուծոյ զօրութիւնը, ոչ միայն իր մէջ կը կրէ, այլ ան նոյն ինքն Աստուծոյ զօրութիւնն է : Այնպէս քարոզեցէք և այնպէս ապրեցէք Աւետարանը որ ձեր խօսքին ու կեանքին մէջ յայտնուի Աստուծոյ զօրութիւնը :

Եւ դուք ով բոլոր փրկուածներ, դուք որ ձեր անձին մէջ տեսած էք Աստուծոյ զօրութիւնը, բարձրացուցէք ձեր ձայները, և սկեպտիկ ու անհաւատ կեանքերու առջեւ վկայ կանգնեցէք ձեր կեանքի փորձառութիւնով թէ Աւետարանը իսկապէս է Աստուծոյ զօրութիւնը :

Իցիւ թէ Պօղոսի հողին մեր մէջ ալ գործէր որ առաջնորդութիւնք գոչելու, «Ինչու որ ես աւօթ չեմ սեպեր Աւետարանը, վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար»:

Թոտոսթօ

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՃՐԱԳԸ

«Որդեակ իմ,» կը գրէր հայր մը իր պանդուխտ զաւակին, «սիրտս տրուր է, զի շատերուն խրկած նուէրներուդ մէջ, միայն իմ փափաքս կը մնայ դեռ չիրագործուած: Ինչու՞ արդեօք: Մի՞թէ ես իմ հայրական սիրովս՝ քեզմէ այդ պղտիկ նուէրը խնդրելով՝ յաւիտեանս յուսախաբութեան պիտի մատնուիմ: Չե՞ս գիտեր որ որդւոյս խրկած այդ չնչին իրը՝ ազամանդեայ թագերէ աւելի արժէք ունի ինծի համար: Բայց և այնպէս առանց յուսահատելու նորէն կը կրկնեմ իմ հին խնդիրքս. — Սիրելիս, խրկէ ինծի ատկէ հատ մը գրպանի եւ լեկտրական ճրագ, որով մութի մէջ քալած ատենս քու խրկած լոյսովդ ճամբաս տեսնել կարենամ»:

Պանդուխտ երիտասարդը կրկին և կրկին կը կարդայ այս նամակը արտասուալի աչերով, և ծունկի գալով, կը խնդրէ վերէն զօրութիւն՝ որով այդ հոսած արցունքները իր հօր փրկութեան դատարանի մէջ լեցնել կարենայ. . .

Ժպտուն երեսով մը նա վեր ցատկեց յանկարծ ու ձեռները դէպ ի վեր, աչերը դէպ երկինք ամբարձած. «Այո, Հայր իմ, ես պիտի խրկեմ անոր Քրօֆթը, եթէ դուն կամիս» մրմնջեց, և զրիչը ձեռք առած, զրեց հետեւեալ նամակը:

«Յոյժ սիրելի հայր իմ,

«Վերջերս ինձ գրած նամակիդ մէջ, այդ քու եւ լեկտրական ճրագի պահանջը որ կրկնուած էր՝ մի կարծեր թէ ուշադրութեանէս վրիպած է: Չէ, ասանկ խնդրի մը կարելի չէ որ ես նկատի չառնեմ: Այդ խնդիրը կարեւոր խնդիր մըն է: Բայց և այնպէս, հայրիկ ջան, դուն այդ կարեւոր խնդիրը քիչ մը իր ճամբայէն հանած ես:

«Ես ցարդ այդ խնդրին չէի պատասխաներ, նախ՝ որպէս զի այդ ելեկտրական ճրագ մը ունենալու փափաքը քու մէջդ աւելի մեծնալով իր բնական վիճակին հասնէր, և երկրորդ՝ որպէս զի այդ պահանջը դոհացնելու յարմար ժամը դար:

«Երբ դուն, սիրելի հայրս, ինծմէ պահանջներ կ'ընես, արդեօք երբեք նկատած ես որ իմ շատ աւելի հին փափաքներս ու խնդիրքներս ցարդ դեռ դոհացում գտած չեն: Որչափ որ խուսեր է այժմ քու հայրական սիրտդ, զի ես քու այդ միակ և

չնչին փափաքդ կատարելը կ'ուշացնեմ, նոյնչափ և աւելի տխուր են իմ որդիական սիրտս ու հողիս, երբ կը նկատեմ որ իմ ապրիներ առաջուայ խընդիրքը դեռ ցարդ սեղանի վրայ կը մնայ և ոչ մի յոյս կայ անոր քեզմէ, իմ սիրելի հօրմէս, նկատի առնուելուն:

«Բայց, ինչպէս դուն իմ ուշացնելովս չի յուսահատած կրկին կը գրես, նոյնը կ'ընեմ և ես իբր քու որդիդ, լոկ օրինակիդ հետեւելով, զի բարի էր այդ օրինակը, և ահա կը կրկնեմ ես ալ իմ հին առաջարկս, յոյս ունենալով որ այս անգամ ի դերեւ պիտի չելլէ: Ահա իմ փափաքս և իմ խնդիրքս. — Հայրիկ ջան, կը խնդրեմ, սիրէ դուն ալ իմ Փըրկիչը այնպէս ինչպէս Աստուած կը սիրէ քեզ: Ահա իմ գիշերուայ և ցորեկուայ աղօթքս ու մտածութեան նիւթս քեզ համար, հայր իմ: Մի, ո՛հ, մի խնդրեր ինձմէ, ելեկտրական ճրագ մը, որուն լոյսը միայն կարճ ժամանակուան համար է: Ես չեմ ուզեր քեզ ատանկ ճրագ մը խրկելու վրայ նոյն իսկ խորհիլ: Վասն զի աչերդ դեռ կարող են իրենց պաշտօնը հաւատարմաբար կատարել և քեզ առաջնորդել նոյն իսկ խաւարի մէջ: Սիրելի հայր, այդ աչերդ, որ այժմ կը հաւատամ արցունքով լեցուած են, կրնան քեզ դեռ այս երկրի վրայ շատ լաւ առաջնորդել: Բայց ես կը խորհիմ որ, երբ քու այդ փայլուն աչերդ նուազին, երբ անոնք ա՛լ քեզ առաջնորդներ ըլլալէ դադրին, մէկ խօսքով երբ դու այս աշխարհի ճամբորդութենէդ ուրիշ երկիր մը փոխադրուելու ճամբան սկսիս կամ աւելի պարզը ըսելով, երբ, հայրիկ ջան, անգութ մահը քեզ այս կեանքէն ուրիշ կեանքի մը առաջնորդէ. . . ո՛հ, հայր իմ, ահա այն ատեն պէտք է քեզ ելեկտրական լոյս «անհաս» զի այն ատեն ներկայ աչերդ ա՛լ քեզ չեն կրնար ծառայել, և դուն «բոլոր» պիտի ըլլաս երկար ճամբորդութիւն մը սկսելու, ճամբորդութիւն մը, որ ամէն մարդ էակի համար ստիպողական է: Ահա այն օր, սիրելի հայր իմ, երբ դուն քու ձեռքիդ մէջ չունենաս այդ ելեկտրական ճրագը, ա՛լ պիտի չկրնաս նոյնիսկ քայլ մը յառաջ ընթանալ. պիտի մնաս հոն ուր որ ես: Ճամբորդները իրենց «լապտերներով» պիտի գան և քեզ իրենց ոտքերուն տակ կոխուտելով պիտի անցնին, առանց ուշ իսկ դարձնելու քու «աղաղակներուդ և աղերսանքներուդ»:

«Այն ատեն, ա՛խ սիրելի հայրս, պիտի նայիս և տեսնես, այդ անցորդներու միջ շատեր, որոնց դէմքերը քեզի ծանօթ են. սակայն և այնպէս անոնցմէ և ոչ մէկը ականջ պիտի տայ քու աղաղակներուդ: Ո՛հ, շատ կարելի է, պիտի տեսնես և զիս ալ, որ

ճրագս ձեռքս դէպ ի յառաջ կը սրանամ, իմ երկնաւոր Հօրս կալուածներուն մէջէն: Եւ դուն այն ատեն պիտի պտուսս ու պիտի կանչես բոլոր ուժովդ: — Որդեակ իմ, որդեակ իմ, եկուր, ո՛հ, եկուր և ձեռքէս բռնած՝ առաջնորդէ զիս իմ ճամբուս մէջ, ինչու որ մտեթ է և ես չեմ կրնար տեսնել: — Բայց այն ատեն, հայրիկ, ես միայն մէկ պատասխան տալու պիտի արտօնուիմ, և այդ է: — Հայրիկ, դժբաղդարար չեմ կրնար գալ, զի «իմ ուքու մէջդ մեծ անդունդ մը կայ» և նոյն ատեն պիտի աւելցնեմ սա խօսքը: — Կը յիշե՞ս հայրիկ, երբ ես քեզ պանդխտութեանս միջոցին կը գրէի, «Հայրիկ սիրէ դո՛ւն ալ իմ Փրկիչս այնպէս, ինչպէս Նա կը սիրէ քեզ» և դուն ինձի այն օրը մտիկ չըրիր:» Ես պիտի երթամ իմ երկնաւոր Հօրս ինձի համար պատրաստած բնակարանը: Դուն ալ, հայր իմ, հոն պիտի դաս, եթէ ունենաս այս ճրագը, որով պիտի քակես ճշմարտութեան ճամբայէն:

Ահա քեզի համար սասանկ երեկտրակոն լոյս մը հողալ կ'ուզեմ, հայրիկ ջան: Մի խնդրեր, ո՛հ, մի խնդրեր ինձմէ ճրագ մը որու տեղ այժմ շատ լաւ կրնաս գործածել աչերդ կամ հասարակ լապտեր մը, այլ խնդրէ ինձմէ ճրագ մը որ քու միւս ճամբորդութեանդ ատեն լուսաւորել կարենայ քեզ: Այս ճրագը, հայրիկ, դուն հիմակուրնէ պէտք է քովդ ունենաս: Եւ եթէ դուն կը փափաքես, սիրելի հայր իմ, ևս պատրաստ եմ սիրայօժար հատ մը՝ քեզ համար անփոփոխ հողալ:

«Ճրագը որ ես քեզ խրկել կ'ուզեմ՝ է կաշկազմ Կրիստոսի Մթ. Գիրք մը:

«Եթէ դուն այդ Մթ. Գիրքը քու գրպանդ դնես, այնպէ՛ն սկսեալ, ինչպէս երեկտրակոն ճրագը դնել կ'ուզէիր, և որպէս ամէն օրուայ քու հաշուետուարդ ամէն երեկոյ անկողինդ երթալէ առաջ քու հաշիւներդ անոր մէջ փնտոսու, և հոն նկատի առնես ուչի ուչով քու առօրեայ ելքն ու մուտքը, դրամագլուխդ և պարտքերդ, կ'ըսեմ, եթէ դուն այդ Գիրքին հետ քու տարեկան հաշուեկշիռդ պահել կարենաս, և անոր հետ հաշտ ու համաձայն ապրես, այն ատեն ճշմարիտ կ'ըսեմ քեզի, հայր, որ դուն ամէնէն զօրաւոր երեկտրակոն ճրագը պիտի ունենաս քու ճամբուդ մէջ:

Ախ, հայրիկ, ահա այն երեկտրակոն ճրագը զոր ես քեզ խրկել կը փափաքեիմ, և որուն դուն իրականութեան մէջ պէտք ունիս, բայց քիչ մը տարբեր ըմբռնած ըլլալով՝ ուրիշ կերպ ճրագ մը կ'ուզես: Բայց քու որդիդ, որ քեզ աւելի կը սիրէ քան զոր դու ինքդ քեզ կը սիրես, կու գայ այսօր խնդրել քեզմէ: — Հայր իմ, կ'ուզե՞ս արդեօք որ

ես քեզ սասանկ երեկտրակոն ճրագ մը խրկեմ, որու առջեւ իբենց աղղեցութիւնը պիտի կորսնցընեն միւս բոլոր արտօնութեան լոյսերը, համաձայն ևս, ուստի գրէ, խնդրեմ, և յաջորդին անփոփոխ կը ստանաս:»

Ամիս մը ետքը յիշեալ պանդխտը մեծ հըրճուանքով մը նամակատուն բերաւ պղտիկ ծրար մը, որուն մէջ ծրարուած էր վերայիշեալ ձեռագրային ճամբուն լուսատու լապտերը», երեկտրակոն ճրագը:

Իսկ դու, սիրելի ընթերցող, այս սողերը երբ կը կարդաս, արդեօք երբեք մտքէդ կ'անցնե՞ս թէ դու ալ ճամբայ մը ունիս երթալիք, ուր ամէն ինչ տարբեր է: Կը զգաս և կը հաւատաս դու ալ թէ ներկայ աչերդ ալ քեզ առաջնորդել պիտի չի կարենան: Կ'ընդունի՞ս թէ առաջնորդի մը պէտք կայ, ինչ որ անպայման է. վասն զի ա՛լ ուրիշ կերպ և ուրիշ ճամբայ չի կայ, որով հոն հասնիլ կարենաս: Եթէ այս ամէնը գիտես որոշապէս և ճիշդ հիմա կը տեսնես թէ գրպանդ պարապ թուղթերու կապոցներ միայն կը կենան, դէհ, ուրեմն, մի ուշանար, սիրելի բարեկամս, փութեալ առանց իսկ բռնել մը անցնելու ճիշդ հիմա Մթ. Գիրք մը հայթայթել, ու զայն գրպանիդ մէջ գետեղել, եւ յետոյ ամէն օր անոր հետ քու ալ առօրեայ կեանքըդ հաշտ ու համաձայն շարունակել: Փութեալ, ո՛հ, մի ուշանար, իմ ճամբորդակից եղբայրս կամ քոյրբուս, վասն զի ոչ օրը գիտենք և ոչ ժամը: Փեսան յանկարծ կու գայ և գողի մը պէս ու գիշերուան մուտքի ատեն պիտի գայ և քեզի քնացած տեսնելով, որքան ներս կը մտնէ, և դուստը յաւիտենապէս կը գողէ:

Գերմանիա ԵՐՄԵՆԱԿ Ս. ՊԱՐՈՆԻԿԵՍՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԽՈՒՆԵՐՈՒ ԶԱՅՆԵՐԸ
(ԼԵՒԵՐԷՆ Ծայրէնը)

Ինչո՞ւ խուլերու ձայները կամաց կամաց այնպէս մը կ'ըլլան որ կարելի կ'ըլլայ զանոնք դիւրաւ զանազանել ուրիշ ձայներէ: Այս հարցումին պատասխանուած է Ալուէ՛ր Մեկեղե՛ի (Լոնտոն)Յունով: — Մարտ թիւերուն մէջ, Այս թերթը պարբերաթերթ մըն է որ կը հրատարակուի խուլերու յատուկ խնդիրներու ուսումնասիրութեան համար, և ուր Տր. Նորմըն Փարիթ շատ մը շահեկան յայտարարութիւններ կ'ընէ խողութեան տկարութիւն ունեցող մարդոց ձայներուն մասին: Հետագայ մասը՝ զոր հոս կը ներկայացնենք՝ առնուած է Պրի-

Բիշ Մեքիէլը շընըլըի (Լոնտոն, Մարտ 30) յիշեալ պարբերաթերթէն արտաստպած մէկ կտորէն:

«Քանի որ խուլ մարդ մը ամէն բանէ աւելի զգայուն է ու վախկոտ է իր այդ թերութեան մասին ուշադրութիւն գրաւելէ՝ սովորութիւն կ'ընէ իրեն ձայնը եղանակաւորել ու անդիտակցաբար կը վարժուի շատ մեղմ ձայնով մը խօսելու: Այս վտանգ մըն է որու դէմ շատ մը խուլեր բաւականաչափ արթուն չեն, և եթէ խուլ անձ մը ուշադրութիւն չընէ՝ կրնայ ինչպէս իր լսողութիւնը նոյնպէս ալ իր ձայնը կորսնցնել աստիճանաբար: Յետոյ մինչեւ իսկ բժշկական ամենալաւ դարմանումներով կրնայ իր լսողութիւնը չվերստանալ, բայց գոնէ զգոյշ ըլլալ պէտք էր իր ձայնը չկորսնցնելու համար: Այս դժբախտութենէն ալ զուշանալու համար խուլ մը պէտք է իր կոկորդին մէջէն խօսելու փորձիչ կերպը թողու ու հոգ տանի ոչ միայն յատկ կերպով արտասանելու, այլ իր բերանը բանալու ու հնչելու իր բառերը որոշակի և մինչեւ իսկ չեշտով: Բարձր խօսելէ պէտք չէ վախնայ:

«Այս առիթով խուլերու համար իբր օգտակար վարժութիւն աղէկ է բարձրաձայն կարգալ, այնպէս որ իրենց ընթերցումը մեծ սեփեակի մը մէջ սովորական լսողութեան տէր մարդոց կողմէ կարելի ըլլայ լսելի ըլլալ: Այս թելադրութիւնը շատ չգնահատուի անոնց կողմէ որոնք ստիպուած են խուլերու հետ գործ ունենալ թէ՛ իրբեւ բարեկամ կամ թէ՛ իրբեւ բժիշկ: որովհետեւ յայտնի բան մըն է թէ որչափ դժուար է խուլերէն ոմանք հասկնալ՝ նոյնչափ ալ դժուար է անոնց հասկցնել: Իրողութիւնը սա է թէ բոլոր մարդկային էակներ միտում մը ունին իրենց ձայները իրենց շուրջ գտնուող ձայներու հետ յարմարցնելու, և երբ ձայնի արտաքին չափ մը չզտնուի՝ իրենց ձայնը իրենց իսկ ձայնաստիճանին վրայ կը ճշդեն: Գալով խուլերու խնդրին, անոնց համար արտաքին բոլոր թրթռումները առաւել կամ նուազ խառնակ ձայներ յառաջ կը բերեն, մինչդեռ բուն իրենց ձայները՝ երբ իրենց լսողական գործարանին հասնին՝ համեմատաբար աւելի մեծ շոինդ կը հանեն:

«Ասոր ալ արդիւնքը սա կ'ըլլայ որ խուլը իր ձայնին եղանակը չափելու դորժին մէջ դժուարութեան կը բաղխի և կը հակամիտի խորհելու թէ ինք պէտք եղածէն շատ աւելի բարձրաձայն կը խօսի, մինչդեռ իրողութիւնը ճիշդ այդ չէ: Ահա այս պատճառով ան իր բարեկամներուն կամ իրեն հետ լսօսակցողներու անպէտ նեղութիւն մըն ալ կու տայ իր ըսելիքը դժուարաբար:

ընելով, կարծես մոռնալով թէ արդէն քիչ դժուար չէ իրեն լսելի ըլլալը: Նմանապէս խուլ մարդ մը երբեմն ինքզինք անպէտ ու անպատեհ կտցութեան մը մէջ կը դնէ օտարականի մը հետ սկսելով խօսակցութիւն մը, որ իր սովորական ձայնէն աւելի մեղմ ձայնով է, և այս կերպով իր լսօսակցին ալ կը ստիպէ սովորականէն աւելի մեղմ ձայնով մը խօսելու անհաճոյ միջոցին»

ՏՈՒՆԻ ՃԱՆՃԸ

Հանրային առողջութեան պահպանման գործին պատասխանատու եղող անձերու մէջ զազափար մը շատոնց ի վեր սկսած է արմատանալ թէ «Գործունեայ, հետաքրքրաշարժ և ծարաւած ճանճը» ինչ որ ալ ըլլայ, անվնաս արարած մը չէ, ինչպէս կ'երեւակայէ զայն բանաստեղծը: Որովհետեւ ան ազտութեան թիւերու մէջ կը մտնէ ու անոնցմով կը սնանի, հոն հաւկիթ կ'ածէ և հոն ճանճիկներ կը թխուին: ան անկէ դուրս կը փոխադրէ մարդոց վնասակար շատ մը հիւանդութիւններ, վարակելով անոնց կերակուրները և ըմպելիքները:

«Ամէն տեսակ ճանճեր» խօսքով ակնարկել ուզուած այս միջատին տեսակները անթիւ ու անհամար են, բայց «տունի ճանճ» բացատրութիւնը երեք տեսակի միայն կը յատկացուի: բուն տունի ճանճը, փոքր տունի ճանճը և կապտաճանճը: Կանանչ ճանճ մը, որ բաւական կը նմանի կապտաճանճին, վերջերս բաւական շատցած է. անոր ճանճորդները շաղիղով կը սնանին և պղտիկ պարկիկներով կը տեղաւորուին գէշերու մնացորդ ոսկորներուն վրայ, և հաւանական է որ հոն կը բազմանան ալ: Փոքր տունի ճանճը երեւոյթով շատ քիչ կը տարբերի բուն տունի ճանճէն, միայն թէ քիչ մը անկէ փոքր է, և տուներու մէջ ճանճերէն աւելի առաջ կ'երեւայ, որովհետեւ եղանակին վերջերը բուն տունի ճանճը աւելի բազմաթիւ կ'ըլլայ: Երկու տեսակին մէջ ալ արականներուն խոշոր ու բազադրեալ աչքերը իրարու շատ մօտ են, և իզականներունը՝ իրարմէ աւելի հեռու: Եւ այս տարբեր սեռերը, որոնք երկու տեսակին մէջ ալ հաւասարապէս անհամար են, երբեմն թիւի համեմատութեամբ նոյն չեն մնար, մինչեւ հիմա դեռ չհասկցուած պատճառներով: Ճանճերը մեծ թիւով կ'ոչնչանան երբ ցուրդ օդերը սկսին, բայց անոնցմէ մաս մը, որ կրցած է ապաստանիլ խոհանոցի մը մէջ, կամ փուռի մը քով, կամ ուրիշ որեւէ տաքուկ տեղ մը, ողջ կը մնան մինչեւ յաջորդ գարունը:

Տուներու մէջ գտնուած այս երեք տեսակ

ճանճերը նոյնաման կամ գրեթէ նոյն պատմութիւնը ունին: Էզը 120է մինչև 130 ձուեր կ'ածէ մէկ անգամէն, և այս գործողութիւնը մէկ եղանակի մէջ չորս անգամ կրնայ ընել: Ըաղմացում մը, որ եթէ ուրիշ աննպաստ միջոցներով չզսպուէր, երկրի վրայ ուրիշ տեսակ կեանքերու համար գրեթէ տեղ պիտի չթողուր: Այդ ձուերը ընտրութեամբ կը դրուին ձիու աղբերու վրայ, բայց երբ այդ գոնի կարելի չըլլայ, ուրիշ որեւէ տեսակ փտող բանի մը վրայ, որուն մէջ ճանճորդները կարելի եղածին չափ շուտ կը թաղուին ու կը թխսուին և կը սնանին, մինչև որ հարսնեակի վիճակին հասնին: Միջատը տասը կամ տասներկու օրուան մէջ — ջերմութեան աստիճանին և արտաքին պայմաններուն համեմատ քիչ մը աւելի քիչ մը պակաս — երեւան կու գայ և տասը կամ քիչ մը աւելի օրերու պէտք կ'ըլլայ որ ան արբունքի հասնի: Տր. Հաուերտ բեղմնաւորութեան հաշիւ մը կու տայ, որ սա վարկածին վրայ հաստատուած է թէ բոլոր ձուերը կը թխսուին և բոլոր ճանճորդները արբունքի կը հասնին, և այդ կերպով կը ցուցնէ թէ այս պայմաններուն տակ էգ մը, որ ձմեռը ողջ կը մնայ և Ապրիլ 15ին 120 ձուեր կ'ածէ, կրնայ մինչև յաջորդ Սեպտեմբերի 10ը 5, 598,720,000,000, արբունքի հասած ճանճեր յառաջ բերել, որմէ գրեթէ կէսը էգ ճանճ կ'ըլլայ: Այս բեղմնաւորումը նպաստաւոր պայմաններու տակ՝ երբ փտած նիւթեր կան ու ջերմութեան աստիճանն ալ նպատակայարմար է՝ աւելի մեծ համեմատութիւններ կրնայ առնել: Այս ստեղծի բեղմնաւորութիւնը զսպելու միակ միջոցը կրնանք սա բառերով զգացնել — «խնամատ աղբահաւաքութիւն»: Ուր որ ճանճերը ուշադրաւորէն շատ են, տարակոյս չկայ թէ հոն կամ այնտեղի մօտերը փտած նիւթեր ալ շատ կան, և այդ աղտեղութեանց մաքրագործումը այդ ճանճարի ու վտանգաւոր արարածներուն ալ նուազումին ու ջնջումին պատճառ պիտի ըլլայ:

Անզդիոյ կտաւարական պաշտօնական վիճակագրութիւններուն մէջ շատ հետաքրքրական փորձեր արձանագրուած են, որոնցմով կարելի է ցուցնել ճանճերու վարակիչ մանրէներ ծաւալելու դերը, կամ միասակար ձուիկներ փոխադրելը այն կերակուրներուն և կաթին մէջ, որոնց վրայ կրնան նստիլ, և այս անտարակուսելի իրողութիւն մըն է: Անոնք բաւական ընդարձակ շրջանակի մը մէջ կրնան ծաւալել հիւանդութիւնները: Փորձի համար ճանճեր բոնուած և մասնաւոր գունաւոր փոշիներով ներկուած են և երեք օր ետքը իրենց բուն

տեղէն 300է մինչև 1,400 եարտա հեռու տեղեր գտնուած են: Անոնք իրենց պօղալի սովորութիւններէն զատ կրնան նկատուիլ նաեւ վտանգաւոր արարածներ: Անոնց տեղ մը բազմացումը պէտք է յիշեցնէ իշխանութեանց թէ պարտականութիւն ունին մաքրագործումի և այս տաղտկալի արարածներուն ոչնչացումին տեսակէտով: Անհատական տուներու մէջ անոնց բազմացումը կապակցեալ է տունին սենեակներուն կամ շատ չտեսնուած անկիւններուն մաքուր կամ անմաքուր ըլլալուն հետ, ինչպէս նաեւ անոնց հասնելու տեղերը կերակուրներ և կաթ դրուելուն հետ: Անոնք, որ կը փափաքին իրենց տունը «առողջապահիկ վայր» մը ընել, զգոյշ ըլլալու են որ այս վտանգաւոր արարածներուն բեղմնաւորումին համար առիթ չտան որեւէ կերպով:

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՎԵՐ. ՅԱԿՈԲ ՊԻՒԼՊԻՒԵԱՆ

Վեր. Յ. Գ. Պիւլպիւլեանի մահուամբ Կիլիկիոյ Աւետ. եկեղեցիները կորսնցուցին իրենց ամէնէն անձնուէր գործիչներէն մէկը: Հարուած անակնկալ էր և ցնցող: Երբ հեռագիրը գուժեց անակնկալ աղէտը՝ բովանդակ Այնթապ սարսուռ մը զգաց: Վեր. Պիւլպիւլեան Սեւերակ կը գտնուէր աւետարանչական պաշտօնով, երբ իր դստեր անակնկալ հիւանդութիւնը սփայեց գինքը անմիջապէս Այնթապ վերադառնալ: Հիւանդ դուստրը պտոյտի և օգափոխութեան պէտք ունենալով՝ Պատուելին տնոր հետ ձամբորդութեան ելաւ դէպ ի բերիս, ուր հասնելէն քիչ վերջը անագորոյն լիտին (հնտալիտին) ճիւղաններուն մէջ գտաւ ինքզինքը, և ամէն դարմանում անօգուտ ըլլալով՝ իր մահկանացուն կնքեց գրեթէ 52 տարեկան հասակին մէջ:

Յ. Գ. Պիւլպիւլեան Լուսաւորչական ընտանիքի մէջ ծնած է, բայց իր հօր շատ կանուխ Բողոքականութեան յարելով՝ իր բոլոր դաստիարակութիւնը Բողոքական աղբիւրէ ստացած է: Իր մանկական բազմաքնները զինքը արհեստի մղած ըլլալով՝ առաջին տարիներուն մէջ չէ ուղած դպրոց յաճախել հակառակ իր ծնողաց փափաքին, սակայն իր արդէն տկար առողջութեան խանգարուելով ստիպուած է թողուլ արհեստը և դպրոց յաճախել: Նոյն ժամանակներն էր որ Կ. Թ. Գոլէճի անունով առաջին նախակրթարանը բացուեցաւ և Յակոբ Պիւլպիւլեան նոյն վարժարանին համար ընտրուած առաջին աշակերտներու շարքին մէջ կը գտնուէր:

Աղքատութիւնն ու վատաողջութիւնը իր դպրոցականի կեանքը շատ դառնացուցած են թէեւ, բայց ինք անյողդողդ յարատեւած է մինչեւ 1878, երբ գոլէճի կրտսեր կարգի դասընթացքը աւարտելէ վերջ յարմար սեպած է իր ուսանողական ընթացքը ընդհատելով տարի մը ուսուցչութիւն ընել: Այս նպատակով զրկուած է Անտիոքի մօտ Հաճի Հապիպլի անուն դիւղ մը ուր իր գործունէութիւնը օգտակար եղած է թէ՛ գիւղին և թէ՛ իր անձին: Յաջորդ տարին Այնթապ վերադառնալով շարունակած է իր գոլէճական ընթացքը զոր աւարտած է 1881ին: Շրջանաւարտութենէ վերջ դարձեալ հրաւիրուած է Հաճի Հապիպլի գիւղէն, ուր այնքան օգտակար եղած է իր նախկին գործունէութեամբ, բայց նոյն միջոցին Քեսապի եկեղեցիէն ալ հրաւիրուած ըլլալով՝ աւելի ընդարձակ ասպարէզ մը բացուած գտաւ իր առջեւ և հոն գնաց: Տարի մը հոն քարոզելէ վերջ Ելլան փոխադրուեցաւ նոյն պաշտօնով ուր մնաց տարի մը ամբողջ:

Ամերեկա երթալու և աստուածարանութիւն ուսանելու փափաքը, որ իր դպրոցական տարիներուն մէջ արդէն սկսած էր, հիմա այս երկամեայ պաշտօնավարութեան միջոցին աւելի զօրացած ըլլալով որոշեց զայն իրագործել և 1883ին ճամբայ ելաւ դէպ ինոր աշխարհ: Հոն յաջողեցաւ մտնել Էնտովր Աստուածարանական ճեմարանը, որուն ընթացքը աւարտեց 1887ին և վեց ամիսի չափ ալ Նիւ Եորքի Ժողովական Աստուածարանական ձեմարանին մէջ յետ-չրջանաւարտական դասընթացքի մը հետեւելէ վերջ 1888ի աշնան վերադարձաւ Այնթապ, ուր հրաւիրուած էր Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան վերատեսչութիւնը ստանձնել: Այս պաշտօնը ամենայն ձեռնհասութեամբ և յաջողութեամբ վարեց վեց երկար տարիներ և իր պաշտօնավարութեան միջոցին էր որ սոյն ընկերակցութիւնը իր ամէնէն փայլուն շրջանը բոլորեց:

1893ին Այնթապի երրորդ (Ալայ Պէյի) եկեղեցիէն հրաւիրուեցաւ իր քարոզիչ: Նա այս գործը ստանձնեց միեւնոյն ժամանակ պահելով Ե. Ք. Ընկերակցութեան վերատեսչի պաշտօնը. բայց Հայկական կոտորածները եկան վերջ տալ Ե. Ք. Ընկերակցութեան գոյութեանը և միեւնոյն ժամանակ լայն դուռ մը բացին Աւետարանի քարոզչութեանը՝ ժողովուրդի ամէն խաւերուն մէջ: Վախի, սրտաբեկութեան և յուսահատութեան մատնուած ժողովուրդը ամէն ժամանակէ աւելի պէտք ունէր յայնժամ Աւետարանի փրկարար և սփոփարար պատ-

գամին և զայն հաղորդող ջերմեռանդ և անձնուէր պաշտօնեաներու: Վեր. Պիւլպիւլեան մէկն եղաւ այդ պաշտօնեաներէն և ամբողջ 10 ամիս իրախուսեց և սփոփեց ժողովուրդը:

1896ի Նոյեմբերին Այնթապի Գայաճըզի եկեղեցիէն հրաւիրուեցաւ քարոզչական պաշտօնի և միեւնոյն տարին նոյն եկեղեցիին խնդրանքով հովիւ ձեռնադրուեցաւ: Երեք տարի Գայաճըզ եկեղեցին հովուելէ վերջ 1899ին Թալաս փոխադրուեցաւ հովուական պաշտօնով, զոր վարեց չորս տարի: Յետոյ Կեսարիոյ մէջ քարոզեց մէկուկէս տարի և մէկուկէս տարի ալ նոյն շրջանակին մէջ գործեց իր ավետարանիչ, այնպէս որ Կեսարիոյ շրջանակին մէջ իր բովանդակ գործունէութիւնը տեւեց եօթը տարի: Այս շրջանին էր որ աղիքներու վտանգաւոր հիւանդութենէ մը բռնուելով Լոնտոն գնաց վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելու և կատարելապէս ասպարհնուած դարձաւ իր գործին զուլիւր:

1907ին դարձեալ հրաւիրուեցաւ Այնթապի Գայաճըզ եկեղեցոյ հովուութեան պաշտօնին զոր ընդունեց և վարեց մինչեւ 1910: Անկէ վերջ Աւետարանիչ կարգուեցաւ Այնթապի կայանին համար և այս պաշտօնը վարեց մինչեւ իր մահը:

Աւետարանի այս անկեղծ ու անձնուէր պաշտօնեան այնքան գոծունեայ և բեղուն կեանքի մը օրհնութիւններուն հետ մեզի կը կաակէ նաեւ Քրիստոնէական ղեղեցիկ նկարագրի մը թանկագին ժառանգութիւնը:

Վեր. Պիւլպիւլեան հոգեւոր մարդ էր: Հոգեւոր կեանքի իրականութիւններուն ինչպէս նաեւ իր քարոզածին ի բոլոր սրտէ կը հաւատար, փորձառարար ղիտէր զանոնք. անոր համար խօսքերը զօրաւոր և անկեղծ շեշտ մը ունէին միշտ:

Իր համոռօտ ինքնակենսագրութեան մէջ կ'ըսէ թէ իր դարձին համար որոշ թուական մը չի կրնար յիշել. անորոշ սկզբնաւորութիւն մը և լոթիկ զարգացում մը ունեցած է իր հոգեւոր կեանքը: Կ'ընդունի թէ երեք բաներ զօրեղապէս ազդած են իր հոգեւոր կեանքի առաջնորդութեան: Նախ ընտանեկան մաքուր մթնոլորտը և իր ծնողաց ազօթքներն ու ջանքերը. երկրորդ՝ հիւանդութիւն և տառապանք որոնք իր առաջին կեանքը դառնացուցած են թէեւ բայց միեւնոյն ժամանակ մեծ դպրոց մը եղած են իրեն համար. և երրորդ՝ ազգեցութիւնը բարեկամներու որոնց մէջ ի մասնաւորի կը յիշուին Միս Շաթըզ և Պ. Սրբահամ Լեւոնեան:

Անոր նկարագրին կարկառուն գիծերէն մէկն

էր նաեւ անկեղծութիւնը . ամէնուն կողմէ անխը-
տիր գնահատուած իր բարեմասնութիւններէն մէկն
էր ասիկա : Իր վարմունքին և իր խօսքերուն մէջ
հաւասարապէս անկեղծ՝ ոչ ոք կրնար յետին միտք
մը կամ անձնասիրական շարժառիթ մը վերադրել
անոնց : Իր խօսքերն ու վարմունքը երբեմն կըր-
նային քննադատուիլ իբր սխալ, բայց ոչ երբեք իբր
կեղծ կամ շահախնդրական : Անկեղծ , աննենդ
Նաթանայէլ մըն էր ասիկա արդարեւ :

Իր անկեղծութեան բնական մէկ ցոլացումն էր
իր անաչառութիւնը : Իր եկեղեցական-վարչական
գործունէութեան մէջ իր նկարագրին այս հանգա-
մանքը շատ ցայտուն եղած է և երբեմն ալ զբժ-
ուարութիւններու մատնած է զինքը :

Ու իր հաւատարմութիւնն ու խոնարհութիւնը
օրինակելի էին պարզապէս : Ոչ թէ մարդոց այլ
Աստուծոյ ծառայողի մը պէս կը վարուէր ան
իր բոլոր գործերուն մէջ : Իր քարոզներուն մէջ
կը դնէր իր բոլոր հոգին : Յուցամուտի ենէ չէր
ախորժեր և հպարտութիւնը տեղ չունէր իր կեան-
քին մէջ որ՝ իր իսկ վկայութեամբ՝ տառապանքի
դպրոցին մէջ առած էր իր ձեւը : Ամէնուն հետ
խոնարհութեամբ և հեղուկեամբ կը վարուէր : Իր
քարոզներուն մէջ չէր մոռնար պզտիկներուն ալ
բաժին մը հանել և ամէն քարոզի սկիզբը պատ-
մութիւն մը կը պատմէր, հետաքրքրական և բա-
րոյալից, մասնաւորապէս պզտիկներուն համար ու-
րոնք ախորժով մտիկ կ'ընէին, և այդ պատմու-
թենէն օգտակար դասեր հանելէ վերջ պզտիկնե-
րուն՝ կ'անցնէր բուն քարոզին :

Վեր. Պիւլպիւլեան կը թողու այրի մը և չորս
անչափահաս որբեր, նաեւ բազմաթիւ որբացեալ
եկեղեցիներ որոնց ամէնուն համար կը հայցենք Սբ.
Հոգիին մխիթարութիւնը :

Ն. Ս. Պ.

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԻՈՐ ՏԱՐԲԵՐԸ

ԲԻԶՐԵՍ Ս. ՄԱՔԼԱՐԵՆ, Վ. Օ., Վ. Գ.

Նախագահ Մասաչուսեցի Արդարաբանական
Հասարակութեան

Կեանքի մէջ ձախողանքը միշտ եղերերգութիւն
մըն է, եղերերգութիւն մը որ ամէն մարդու սըր-
տին կը դպչի, որովհետեւ ամէն մարդ բնական
փափաք մը ունի յաջողելու : Բայց նորէն ալ, հա-
կառակ այն կարեւորութեան զոր ունի յաջողութիւ-
նը, շատ մը երիտասարդներ փոխանակ իրենց յա-
ջողութեան գրգիռները սորվելու՝ մութ ու տար-
տամ գաղափար մը ունին յաջողութեան տարբե-
րուն վրայ :

Բոպէ մը իսկ խորհելով յայտնի կ'ըլլայ թէ յա-
ջողութեան տարբերը այնչափ կը տարբերին՝ որ-
չափ կը տարբերին կեանքի նշանակեանքը . Հա-
րըստութիւն, սրբութիւն, պատիւ, սէր, երա-
նութիւն, զօրութիւն — այս բոլորը տարբեր նշա-
նակեանք են, և որովհետեւ մագլցուելիք սարբը
այնչափ կը տարբերին՝ չկայ միակ միջոց մը որ ա-
նոնց ամէնուն մագլցելու համար յարմար ըլլայ :
Անոնցմէ ամէնէն բարձրերը ու տգաւորիչները —
սրբութիւն, երանութիւն, սէր — անտարակոյս
կը կազմեն խումբ մը որ միւսներէն բոլորովին կը
տարբերի : Անոնք կը պահանջեն, ու իսկապէս
կ'արժեն, մասնաւոր ուսումնասիրութիւն մը,
բայց անոնք այս յօդուածին կալուածին մէջ ըլլալէ
շատ հեռու են : Հոս պիտի խօսինք միայն սա սե-
սակ նիւթերու վրայ . զոր օր. հարստութիւն,
պատիւ, զօրութիւն և ընկերային օգտակարու-
թիւն :

Թէ այս սարբերու յաջող մագլցումը ո՛րչափ եր-
ջանկութիւն կրնայ հայթայթել բոլոր մագլցողնե-
րու՝ այդ մասին հարցնելու պէտք չենք տեսնու-
առ այժմ : Միայն բաւական է դիտնալ թէ ասոնց
փերաքանչիւրը կրնայ էական օգնութիւն մը մա-
տուցանել այդ մագլցողներու երջանկութեան, եթէ
անոր բարի ազդեցութիւնը չչէզոքացուիր ուրիշ
հակառակամարտ ուժով մը : Միայն պէտք է որ
մարդ ունենայ սա պարզ կարողութիւնը, որ է
աչքերը բաց պահել տեսնելու համար թէ ոչ ա-
նողջութիւն, ոչ հարստութիւն, ոչ պատիւ և ոչ
զօրութիւն, ոչ ալ այս բոլորին իրերախառնումը,
յաջողութեան չեն առաջնորդեր ստիպողաբար :

Այս բոլորին մէջ հետապնդողին շահը չափէն
աւելի ինք իր եսին մէջ կեդրոնանալ է, մինչդեռ
երջանկութիւնը կը պահանջէ այնպիսի շահ մը որ
մէկը իր եսէն դուրս հանելու չափ մեծ ըլլայ : Այս
աւելի պարզուած է Սբ. Գրական այն յարակար-
ծիքին մէջ թէ այն որ իր անձը փրկել կ'ուզէ՝ պէտք
է կորսնցնէ զայն — խորունկ ճշմարտութիւն մը որ
ոչ միայն կրօնասէրներէ ճանչցուած է, այլ նաեւ
անոնցմէ որոնք բնաւ վերաբերում մը չունին
կրօնքի հետ :

Առանց առաջադիւն Նաւը

Ճոն Սթիւարթ Միլ իր ինքնակենսագրութեան
մէջ ուշագրաւ մէկ պատմութիւնը կ'ընէ իր կեան-
քին մէջ պատահած տագնապի մը, երբ կեանքի և
գործունէութեան մասին իր ունեցած գաղափա-
րին հիմունքը որուն մէջ կրթուած էր ինք՝ խախ-
տեալ երեցաւ իրեն, և ան ինքզինքը իբր թէ ծո-
վի մէջ անվնաս դէկ ունեցող բայց առաջաստ չու-

նեցող ամուր նաւի մը մէջ զգաց : Այն փորձառու-
թիւնը, որուն մէջէն սնցաւ այն առեն, իր նկարա-
զիրին և գաղափարին վրայ մեծ փոփոխութիւն մը
յառաջ բերաւ :

«Ես երբեք չդիտեցայ,» կ'ըսէ ան, «հաւատա-
լու մէջ թէ երջանկութիւնը վարքի բոլոր կանոն-
ներուն փորձանիշն է և կեանքին նպատակա-
կէտը : Բայց հիմա ես կը խորհէի թէ այս նպատա-
կակէտին կարելի էր հասնիլ զայն ուղղակի նպա-
տակակէտ չընելով : Անոնք միայն երջանիկ են (կը
մտածէի ես) որոնք իրենց միտքերը հաստատած
էին իրենց երջանկութեանն ուրիշ առարկայի մը
վրայ, այսինքն ուրիշներու երջանկութեան, մարդ-
կութեան բարեկաման վրայ, կամ մինչեւ իսկ
արուեստի մը կամ հետապնդումի մը վրայ, զոր
իբր միջոց չեն հետապնդեր, բայց այն ինքնին գա-
ղափարական նպատակակէտ մըն է : Այս կերպով
ուրիշ բան մը նշանակէտ ընտրելով անոնք երջան-
կութիւն եւս կը գտնեն միտածամանակ : Կեանքի
վայելքները (այսպէս էր իմ գաղափարս) բաւական
են հաճելի ըլլալու՝ երբ անոնք չեն առնուին, առանց
զլիսաւոր առարկան ըլլալու : Անոնք մը այսպէս
ըրէ զանոնք, ու անմիջապէս կը զգացուի որ ա-
նոնք անբաւական են : Անոնք հետազօտիչ քննու-
թեան մը չեն կրնար դիմանալ : Ինքզինքիդ հար-
ցուր թէ երջանիկ ես, ու այն առեն կը դադրիս
երջանիկ ըլլալէ : Միակ առիթը ոչ թէ երջանկու-
թիւնը, այլ անկէ դուրս ուրիշ բան մը հետապնդելն
է իբրեւ կեանքի նպատակակէտը : Գու ինքնագի-
տակցութիւնդ, պրպտումներդ, հարցափորձերդ
անոր վրայ սպասէ և ուրիշ կերպով մը՝ բաղդա-
ւոր պարագաներու տակ՝ պիտի ներշնչես երջան-
կութիւնը քու շնչած օդիդ մէջ, առանց անոր վրայ
մտածելու կամ անդրադառնալու, առանց զայն ե-
րեւակայութեանդ մէջ պատկերացնելու, կամ զայն
ճակատագրական հարցումներով խուսափեցնելու :
Ահա այս գաղափարը իմ կեանքի փիլիսոփայու-
թեանս հիմը եղաւ : Եւ հիմա իսկ ես զայն կը
նկատեմ իբրեւ լաւազոյն գաղափարն ամէն անոնց
համար որոնք անչափաւոր աստիճանով մը զգա-
յունութիւն և վայելքի կարողութիւն ունին, այս-
ինքն մարդկութեան խոշոր մեծամասնութեան հա-
մար :

Եսամուլական նպատակակէտներու յիմարականութեանը

Զուտ եսամուլական նպատակակէտներու յաջող
հետապնդումին մէջ երջանկութիւն փնտռելու յի-
մարականութեան մասին այս քանի մը թելադրու-
թիւնները ընելէ ետքը, կրնանք մեր ուսումնա-
սիրութիւնը առաջ տանիլ առանց չափազանցու-

թեան, կամ յաջողութեան կարեւորութիւնը նուա-
զեցնելու առանց վախ մը ունենալու :

Բայց հարցումը սա է թէ ի՞նչ կարելի է յա-
ջողիլ : Ի՞նչ չեն անոնք որ յաջողութեան մասին
կը խօսին իբրեւ բախտի խնդիր մը : Չենք տարա-
կուսիր թէ մարդոցմէ ոմանց մեծ առիթներ և պա-
տեհութիւններ կը ներկայանան առանց իրենց կող-
մէ մասնաւոր որեւէ մէկ ջանքի — անոնք ոչ մեծ
ծնած են, ոչ ալ մեծութեան հասած են իրենց ձեռ-
նարկներով, այլ մեծութիւնը եկած ու անոնց ներ-
կայացած է : Բայց ինչ որ ալ ըլլայ, մինչեւ ան-
գամ այսպիսի մարդիկ աղղու ուժ մը ունենալու
պէտք են պատեհութիւնը բռնելու և չփախցնելու
համար : Իրական պարագաներու ուշադիր մէկ ու-
սումնասիրութիւնը երեւան կը հանէ սա իրողու-
թիւնը թէ գրեթէ բոլոր յաջողութեանց համար
հաստատուն հիմ մը կայ : Բայց ամէն պարագայի
տակ աւելի յիմարական բան մը չկայ քան պար-
զապէս բախտին սպասելը : Անզդիացի հանրածա-
նօթ վերաբոյժի մը խօսքերով խօսելով, «Այն մարդը
որ աղէկ բախտի մը մէկ հարուածին սպասելով
գոհ կ'ըլլայ» թերեւս պիտի ստիպուի սպասել մին-
չեւ որ անդամալուծութեան հարուած մը ստա-
նայ :»

Մէկը այն տարրերէն, որոնք իրապէս յաջո-
ղութեան հետապնդումին կալուածին մէջ կը մշտ-
նեն, կրնայ ըսուիլ թէ առողջութիւնն է : Այս,
մինչեւ իսկ ամէնէն կարեւորներէն մէկը : Այս —
բարեբախտաբար հիմա առաջինը եղածէն աւելի
կը ճանչցուի ընդհանրապէս — այնչափ բացորոշ ե-
ղած է որ, անոր վրայ աւելի խօսելու շատ քիչ
պէտք կայ : Ամէն մարդ տեսած ըլլալու է որ ա-
ռողջութեան պակասը ընկրկումի լուրջ պատճառ
մը կ'ըլլայ, թէեւ շատ մարդիկ կրցած են մեծ բա-
նիւր ընել հակառակ անոր : Իրապէս, առողջու-
թիւնը միայն միջոց մը չէ նպատակակէտի մը հա-
մար, բայց ինքնին գերազանց բարիք մըն է : Այս
այնչափ ճշմարիտ է որ առողջութիւնը զոհելով եր-
ջանիկ ըլլալու մասին խօսիլ, խօսքերու մէջ հա-
կասական ըլլալ է — այսպիսի «յաջողութիւն» մը
իրական չկրնար ըլլալ :

Աղէկ առողջութիւն մը ընականաբար ժառան-
գականութեան խնդիր մըն է մեծապէս, որով ան-
հատին ուժին տակ ինչպէ՞ դուրս է մեծ մասով :
Բայց միեւնոյն առեն տկար կազմ մը բարեփոխե-
լու համար այնչափ բաներ կարելի է ընել որչափ
կարելի է ընել աղէկ առողջութիւն մը խանդարե-
լու համար : Բարեբախտաբար առողջութեան կա-
նոնները բաւական պարզ են ընականոն մարդոց

համար : Մեծ և կարեւոր խնդիրը որեւէ տեսակ չափազանցութենէ ազատ ըլլալ ու բարեխառն ապրիլն է :

Ուրիւր արտաւել երկու վեցէ հասարակ է :

Այն պատանիներու համար , որոնք լրջօրէն կը հետեւին գոլէճի դասընթացքին , թէ՛ անցեալին թէ՛ ալ ներկային մէջ , չափազանց կարդալու մեծ վտանգ մը կայ : Ըսել չեմ ուզեր թէ այս մարդիկը դժուար բաներ կ'ուսանին , այլ իրենց գիրքերուն հետ շատ երկար ատեն կը դբաղին : Անոնք չեն օգտուիր իմ գոլէճի օրերու այն իմաստուն ասացուածէն , այսինքն , վեց առաւել երկու ութը կ'ընէ , այլ անկէ թէ՛ ութը առաւել երկու վեց կ'ընէ : Այս ասացուածը սերտողութեան ժամերուն մասին էր և կը ցուցնէր թէ այն մարդը որ վեց ժամ կ'աշխատէր երկու ալ շահ ունենալով իր աշխատութեանց արդիւնքը ութ ժամուան աշխատութեան արդիւնքին հաւասար կ'ըլլար , բայց այն որ անկէ աւելի կ'աշխատէր՝ իր աշխատութեան արդիւնքը իրապէս նուազեցուցած կ'ըլլար :

Սերտողութեան կարճ ժամերուն առողջութեան ունեցած օգուտէն զատ , տարակոյս չկայ թէ «սոսի» գործելով քիչ ժամանակի մէջ շատ բան սորվելու սովորութիւնը գոլէճի մէջ սորվելիք մէնէն արժէքաւոր մէկ սովորութիւնն է : Մարդոցմէ շատեր , մինչեւ անգամ անոնք որ կը կարծեն թէ ծանր կ'աշխատին որովհետեւ երկար ատեն կ'աշխատին , չեն գիտեր թէ ծանր աշխատութիւնը ինչ է — գոնէ մտաւոր ծանր աշխատութիւնը : Անոնք բանի մը համար պէտք եղած ժամանակին եռապատիկը կ'առնեն և այս ծանծաղ գործի վարժութիւնը գոլէճի մէջ ստացուած ամէնէն գէշ սովորութիւններէն մէկն է :

Վերջապէս , մէկու մը գոլէճի մէջ սորվածին քանակը շատ կարեւորութիւն չունի , այլ այն ոգին ու մեթոտը որով այն բաները սորվուած են : Թերեւս գոլէճի մէջ «ուսանող»ի մը իր սորված առարկաներուն մասին քիչ բան գիտնալը ծուլութեան ամէնէն գէշ տեսակը չէ : Ամէնէն գէշ բանը թուլութեան և իր ջանքերը կեդրոնացնելու անկարողութեան բնոյթն է : Ահա ասոնք են գոլէճական կրթութեան տկար կողմերը :

Երիտասարդը , որ իրեն ճամբայ մը պիտի բանայ կեանքի մէջ , աղէկ կ'ընէ երբ չընտրէ այնպիսի գոլէճ մը ուր աշխատութիւնները իրրեւ կանոն ծանր չեն : Այսպիսի գործ մը ընկերական հաճոյքէ ալ պէտք է բաժին ունենայ , ինչպէս նաեւ մարմնակրթանքի ամէն առողջապահիկ տեսակներէն : Հոս ալ գլխաւոր վտանգը չափազանցութենէ

է , մարդ մը որ յաջողի կ'ուզէ՝ պէտք է սորվի թէ ինչ կը նշանակէ բարեխառնութիւնը :

Յաջողութեան ուրիշ ամէնէն զօրաւոր տարրերն են գործի մէջ եռանդ ու շահագրգռութիւն ունենալ : Թէ այս աղէկ բաներուն ո՛րչափը ժառանգականութեամբ և ո՛րչափը վարժութեամբ կը ստացուին՝ դժուար է յայտնել , որովհետեւ երկու ազդեցութիւններն ալ միասնաբար կը գործեն , և զանոնք իրարմէ բաժնել դիւրին բան մը չէ : Թերեւս , գիտութեան զարգացումով կարող ըլլանք ժառանգականութեան և պարագաներու համեմատական ազդեցութիւնները ճշգրտապէս չափել : Բայց գործ ընել ուզող մարդը այդ հեռաւոր հաւանականութեան համար չսպասեր : Անոր համար բաւական է գիտնալ թէ եռանդին և շահագրգռութեան մշակումը անվիճելիօրէն կարեւոր է :

Չոր օրինակ , անվիճելի է թէ եռանդագին գործունէութիւն մը օրինակելի կ'ըլլայ : Ամերիկացիները համբաւեալ ճիւղերու մէջ կ'ըլլան : Բայց նուազ գործունէայ օտարականը որ հոս կու գայ՝ շուտով ինք ալ կ'ընդօրինակէ աճապարելու կերպը : Բայց միեւնոյն ատեն կրնայ ըսուիլ թէ այս փութկոտութիւնը անխառն բարիք մը չէ : Ասոր պատճառով է որ շատ մը ձեռնհաս Ամերիկացիներ անկարող կ'ըլլան շատ մը բարձրագոյն ձեռնարկներու մէջ որոնց կարող են : Անոնք անհամբեր են և կեանքը դիտելու ժամանակ չեն տար ինքզինքնուն , ոչ ալ պէտք եղած հանդարտամտութեամբ կը յարձակին այն խնդիրներուն վրայ որ զիրենք կը շահագրգռեն : Այս թերութիւնը եթէ նկատի չառնենք՝ աճապարելու այս ոգին ազգային հիանալի յատկութիւն մըն է :

Բայց եռանդը հարկաւորապէս աճապարանք չպահանջեր , Հոս , ինչպէս նաեւ ուրիշ տեղ , յաջող մարդոցմէ շատեր եռանդոտներ են առանց փութկոտների ըլլալու իրենց գործունէութեան մէջ : Ծանր ու շարունակական գործ կարելի է ընել շատ հանդարտամտութեամբ , և յաճախ շատ ալ ազդու կ'ըլլայ այսպիսի գործունէութիւն մը :

(Ծարուանկէլ)

ՔՂԻ-ԳԱՍԱՊԱՍԵ

Դարեր առաջ «Բարի մարդիկը աշխարհէ կը վերցունին» կ'օղբար մարգարէն և ասով վաղահաս չարիք մը կը նախատեսէր ժողովրդեան վրայ դաւլիք :

Մարգարէ մը չըլլալով հանդերձ դժուար չեմ գտներ այսօրուրնէ իսկ երեւակայել այն մեծ բայց և անոր անմիջական տխուր հետեւութիւնները

որ հետզհետէ պիտի երեւին ժողովրդեան մը մէջ, որուն առաջնորդող կարեւոր անհատները մէկը միւսին ետեւէն կը զատուին և կը մեկնին այլուր :

Վերջերս այսօրինակ դժբաղդութիւն մը պատահեցաւ Քղիի համար ընդհանրապէս և Գասապայի համար մասնաւորապէս :

Հինգ տարիէ ի վեր իր գործունէութեամբը տեղոյս համայնքին համակրութիւնը վայելող և ազգային գործոց մէջ օգտակար հանդիսացող Գեր. Տ. Պսակ Ծ. Վ. Խորէնեան տեղոյս առաջնորդութենէն Խարբերողի նման աւելի մեծ և բազմապահանջ վիճակի մը առաջնորդութեան փոխադրուեցաւ : Որչափ որ ալ Նորին Գերապատուութեան այս բարձրացումը իրեն հաճելի և Խարբերողոց օգտակար երեւնայ՝ Քղեցոց համար սակայն կորուստ և դժբաղդութիւն է՝ դժուարաւ դարմանելի :

Երկու տարուայ շրջանի միջոցին տեղոյս և շրջակայից Միաց. Ընկ.եան վարժարաններու ընդհ. տեսչութիւնը օգտակարապէս վարող Տիար Մ. Մինասեանի վանի վարժապետանոցին տեսչութեանը փոխադրուելու կարգադրութիւնը ուրիշ դժբախտութիւն մը եղաւ Քղեցոց. կարծես ասոնք քիչ ըլլային՝ ասոնց վրայ աւելցան նաեւ մէկ երկու կարեւոր դասատուաց փոփոխութիւնները Հայ և Բողոք. վարժարաններու մէջ :

Ասոնց ամէնուն վրայ աւելցաւ մեծ դժբախտութիւնը որ՝ Քղիի ընհանուր համայնքին վրայ իր ազդեցութիւնը ունեցաւ և կապարի նման ծանրացաւ մասնաւորապէս տեղոյս Բողոք. ժողովրդեան վրայ : Ասիկա Աւետ. եկեղեցոյ համակրելի հովիւ Վեր. Պետրոս Ն. Խաչատուրեանի ասկից հրաժարելով Զնգուշի Աւետ. եկեղեցոյն հրաւերին համակրապիլը եղաւ, ինչ որ յառաջ եկած է իր Համետ. աիկնոջ այստեղի կիրմային չկարենալ հանդուրժելէն և թեթեւ հիւանդութեան մը ենթարկուելէն :

Վեր. Պետրոս ընդհանրութենէն սիրուած դէմք մը ըլլալով տեղոյս մէջ իր ունեցած ութը տարուայ պաշտօնավարութեամբը շատ օգտակար եղած է հոս, թէ՛ բեմին վրայ և թէ՛ հօտին մէջ իբր կենցաղագէտ, փորձառու մէկը : Տեղոյս Աւետ. ժողովրդեան եկեղեցասէր ոգին ամէն կերպով պատրաստ էր, ի դնահատութիւն իր երէցին բարւոք գործունէութեանը, լաւագոյն պայմաններով դարձեալ հոս պահել զայն. ատոր սիրայօժար պիտի համակրապէր նաեւ Վերապատուելին՝ եթէ իր աիկնոջ մարմնական տկարութիւնը անհրաժեշտ չդարձնէր անոր ասկից մեկնելու հարկը :

Վեր. Պետրոս այնքան սիրալիր յարաբերութիւն

մշակած էր ամէն կարգի մարդոց և ժողովուրդներու հետ որ վերջերս երբ Գեր. Տ. Պսակ Ծ. Վ. Տէր Խորէնեան իր հնգամեայ տեղեկագիրը կը խորհէր Պատրիարքարան՝ Տեղեկագրի յարմարանութեան մասին գրած բաժնին մէջ խղճի պարտականութիւն կը համարէր գովեստներով դնահատել Վեր. Հօր այն ծառայութիւնները որոնք Լուս. և Բողոք. ժողովուրդներու միջև սիրալիր յարաբերութեանց մշակումին մէջ իրենց մասնաւոր տեղն ունեցեր էին : Այժմու առաջնորդական փոխանորդ Արժ. Տ. Բագարատ հայրը իր մէկ խօսակցութեանը մէջ, ի մէջ այլոց, սա գովեստը տուած է մեր այս սրբեցեալ երէցին նկատմամբ. «Թէ՛ հին և թէ՛ նոր ըժժիմներու ատեն խաղաղութեան պահպանման և ժողովրդային յուզումներու առաջին անհերք գործերուն մէջ իր պահպանողական, հեղեկ գործունէութեամբը շնորհակալութեան արժանի դերեր կատարած է Վեր. Պետրոս մեր մէջ,» Թողունք Բողոքականներու տուած գովեստները :

Վերջապէս Առաջնորդ Հօր, Վեր. Պետրոսի, ընդհ. տեսուչ Մինասեանի և ուսուցչաց ոմանց բաժանումները իրողութիւններ են. որոնք են, սա կայն, որ պիտի յաջորդեն անոնց, ահա կարեւոր ինդիքը :

Ազգ. Գաւառական ժողովը իրրեւ յաջորդ Գեր. Տ. Պսակ Ծ. Վ. Վրդի՝ իմաստուն ընտրութիւն մը քուէարկեց յանձին Գեր. Տ. Գնէլ Ծ. Վ. Գալէմքեարեանի(*), Միաց. Ընկ.եան Տնօրէն ժողովը ալ անշուշտ գէշ աղէկ տեսուչի ընտրութիւն մը արդէն կը կատարէ կամ կատարած է : Կը մնայ խորհիլ թէ տեղոյս Աւետ. եկեղեցին զո՞վ պիտի ունենայ իբր երէց :

Կը սիրեմ յուսալ թէ այս մասին Խարբերողի Գործակից ժողովը տեղացիներու արդէն ըրած զիմումներուն վրայ պիտի փութայ Վեր. Պետրոսի արժանաւոր յաջորդ մը խրկիլ և դպրոցներուն ալ կարող վարժապետ մը և վարժուհի մը :

Որպէս զի Աւետ. գործը և տեղոյս ժողովուրդը հովուելու գործը չխանգարին՝ հարկ անհրաժեշտ է ամպինը թափուր չթողուլ : Ժողովրդեան ցուցուցած եռանդէն ալ կը հետեւեցնեմ թէ իր կողմէն պէտք եղած անձնուրացութիւնները ի դէպ ժամու պիտի արտայայտէ :

Տեղոյս նկատմամբ արդէն այս թերթին մէջ ուրիշ առիթներով տեղեկութիւններ տրուած են.

(*) Վերջին պահուն կ'իմանամ թէ Նորին Գերապատուութիւնը հեռագրաւ մերժած է ընդունիլ այդ պաշտօնը : Ծ. Յ.

սա միայն ըսեմ թէ հոս ջրառատ զով տեղ մըն է ժողովուրդը մեծաւ մասամբ քաղաքակիրթ և կրօնասէր են, Հայոց, Թրքաց և Գրգաց յարաբերութիւնները ընդհանրապէս խաղաղասիրական են: Հակառակ Գասապայի 350 տուն (որոնցմէ 35էն քիչ աւելին Բողոք.) Հայ և ասկից քիչ պակաս Թուրք տներ պարունակելուն ամէն կարգի զոր ծունէութեան ասպարէզ կայ տակաւին՝ գործել գիացողին համար:

Կ'ազօթենք որ Տէրը իննայէ այս տեղին և իր ծառաներէն մէկ քանին փութացնէ հոս:

ՏՐ. Կ. Գ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՄՆԻԲԸ

Մր. Սէմիւրը Ծինլի Պրիզ Մորս Եէյլի համալսարանէն ելելէն ետք Անգղիա գնաց նկարչութիւն և անդրիագործութիւն սորվելու: 1813ին ոսկի չքաղրամ մը ընդունեց արձանի մը համար, յետոյ վերադարձաւ Ամերիկա իր արհեստն ի գործ դնելու, և այդ արհեստը քսան տարի իր զլխաւոր զբաղումն եղաւ: Այդ միջոցին զեղարուեստի Ազգային Ակադեմիան հաստատուեցաւ, որուն ինքը նախագահեց 16 տարիներ: Քանիցս Եւրոպա այցելեց իր զեղարուեստը կատարելագործելու: Հանդիպեցաւ Տէյնս անուն երեւելի դասախօսի մը որ Ամերիկայի մէջ, առաջինն ըլլալով ձառ մը խօսեցաւ ելեկտրամագնիսականութեան վրայ, և Մր. Մորսի նուիրեց իր ելեկտրամագնիսը: Ապա ելեկտրամագնիսը քիչ մը փոփոխութիւն կրելով գործածուեցաւ բոլոր հեռագրատանց մէջ, Ժամանակ մը այլեւայլ փորձեր ընելէ ետք, 1832ին Ամերիկա դառնալուն, գաղափարն յղացաւ հեռագրական արձանագրող գործիքին որ ցայսօր կը գործածուի: Հեռագիրը բազկացեալ է լուր զրկող մեքենայէ մը և միւս ծայրը մեքենաբար արձանագրող ուրիշ մեքենայէ մը: Նա այս երկուքին յատակածեւերը ներկայեց իր նաւի ուղեկիցներուն, որոց վկայութեանը զիմեւ հարկ եղաւ վերջը դատարանի մը առջեւ: 1835ին իր սենեկին մէջ կէս մղոն երկարութեամբ թելի պատատ մը զբաւ, որուն մէկ ծայրէն լուր մը զրկեց և միւս ծայրը արձանագրուեցաւ: 1840ին իր գիւտին մենաշնորհն առաւ, և 1843ին Քոնկրէսը 30,000 տոլար (7,000 իրայի մօտ) յատկացուց այդ նպատակին: Ա՛լ պատիւներ սկսան տեղալ անոր վրայ: 1848ին բարեյիշատակ Սուլթան Ապտ իւլ Մէճիտ շնորհեց անոր ակաճակուն Իֆթիխար պատուանշան, Բրուսիոյ և Աւստրիոյ կայսերք տունն ոսկի չքաղրամներ, Յրանսայի կայսրը տուաւ Պատուոյ Լէգէոնի խաչը,

Իտալիոյ և Փորթուգալի թագաւորները և Սպանիոյ թագուհին տունն պատիւներ: 1858ին Նախդէտն Գ.ի թելադրութեամբ Յրանսայի, Թուրքիոյ, Ռուսիոյ, Աւստրիոյ և վեց տէրութեանց միւսներկայացուցիչները որոշեցին 400,000 Փրանքի դուար մը նուիրել ի պատիւ անոր աշխատութիւններուն, 1871ին արոյրէ արձան մը բացուեցաւ ի պատիւ իրեն: Մորս մեռաւ 1872ին:

1855 Օգոս. 15ին, Նիւ Յաւուենտլէնտի Սէն Ճոն անուն տեղի մը մէջ խնձոյքի մը ժամանակ, Փրոֆ. Մորս հետեւեալ պատասխանը տուաւ, ելեկտրական հեռագրին վերաբերեալ կարգ մը պատուասիրական նկատողութեանց հանդէպ: «Ամենակաթոգին եղանակաւ շնորհակալ եմ ձեզ, տեարք և տիկնայք, այն շողոմ յիշատակութեան համար որ ինձի ըրիք ելեկտրական հեռագրին վերաբերութեամբ, զի ատիկա կ'արտայայտէ ձեր սրտերուն մարդասիրութիւնը, բարեացակամութիւնն ու վեհանձնութիւնը, բայց տիկնայք և տեարք, ես ինքզինքս կը դնեմ իբրեւ սոսկական և միայնակ այս մեծ գործին միջոցներուն մէջ որ ազգերը իրարու կը կապէ ելեկտրական յարաբերութեան կապերով: Միայն այս կերպով է որ կրնամ սփոփանք գտնել այն պարագայէն զոր ճշմարտապէս դովասանքի ճընշումը կրնամ անուանել: Ներեցէք որ բացատրեմ, իմ կողմէս կեղծաւորութիւն պիտի ըլլար անդառնալութիւն կամ անտարբերութիւն ցուցնել իմ ընկերներուս բարի կարծիքին հանդէպ: Ոչ, չեմ կեղծեր, այլ շնորհակալութեան խորին զգացումով մը համակուած կը տեսնեմ թէ կեանքիս այնչափ շատ տարիներու աշխատութիւններն ու զոհողութիւնները մէկդի ձգուած չեն, անդործադրելի և ցնորական երազի մը պէս: Սակայն ես ինքնաձանձութութեան այնպէս վերի վերոյ հասու եղած չեմ որ արթուն չըլլամ զիտնալու թէ բան մը կայ այս կուրծքին մէջ, որ միշտ պատրաստ է անձնական հպարտութիւնը թնկցնելու գովութեան ամենափոքր կայծով մը, — հպարտութիւն մը որ գոռոզ պարծենկոտութեամբ պիտի արտասուէր: Այս չէ՛ այն մեծ Բարկունը որ ես իմ զօրութեան կարողութիւնովս շինեցի, իմ թագաւորութեանս տանը համար և իմ վեհափառութեանս պատուոյն համար՝ Ո՞վ է ան որ կը հրամայէ փայլակներուն որ երթան ու անոնք կ'երթան, ո՞վ տուաւ աշխարհին հեռագրիները:

«Ներեցէք որ պատմեմ հեռագրութեան նախկին պատմութեան մէջ պատահար մը, որ ուղղակի կը պատշաճի այս հարցումներուն պատասխաններուն: Միաց. Նահանգաց Քոնկրէսի երկու նիստերուն ա-

զերսագիր ատլի կառավարութեան, դրամական օգնութիւն խնդրելով, որպէս զի կազմէինք Ուաշինկթընէ մինչեւ Պալթիմոր հեռագրի փորձական գիծ մը, անոր գործնականութիւնն ու օգտակարութիւնը փորձելու համար։ Այդ գծին յամր երկարումը տեւեց մինչեւ 1842 թուականին վախճանը, որ ատեն սպառնացաւ արդիւնք մը այնպէս ձախող, ինչպէս էր 1837-38ի նախորդ նիստին մէջ, Հարկ չկայ աւելի երկարելու, կը բաւէ ակնարկել սա իրողութիւնը թէ 1837ի նախընթաց նիստին ժամանակը վատնած էի ունեցած դրամական բոլոր միջոցներս Ուաշինկթընի մէջ հաստատուելու համար, նոյն ատեն Քոնկրէսի ուշադրութիւնը կը հրաւիրէի ցայն վայր չփորձուած և նոյն ատեն ցնորական համարուած ելեկարական հեռագրի ձեռնարկութեանս վրայ։

«Տարիներ պէտք եղան մինչեւ որ նորէն ինքզինքս դրամապէս ի վիճակի դրի Քոնկրէսին առջեւ երեւնալու համար իմ գիւտովս, և հիմա տեսայ ուրիշ ամբողջական նիստ մը իր վերջին օրուանը մէջ որ ճիշդ փակուելու վրայ էր, և որուն համար ուրիշ տարի մըն ալ յապաղելու երկիրը կ'ունենայի։ Ազերսագիրս ստուգիւ անցած էր Քոնկրէսէն Մերակոյտի արձանագրութիւններուն մէջ, բայց վերջէն օրսն էր ինչու ընդունուած էին հարկերէն աւելի ազերսագիրներ սրբննուելու և անցնելու էին, իմինիս կարգը գալէն առաջ։ Այս առկախման անձկութիւնէն սրտամաշ եղած, Մերակուտական բարեկամներէս մէկուն խորհուրդ հարցուցի. ինքը իմ խնդրիս կարեւորութեան ու գործնականութեան բաղձն այնչափ փոքր բան սեպեց որ խրատեց զիս կորսուած համարիլ գայն։

«Մտքի վիճակով մը, դժբ ձեզ կը թողում երեւակայել, դարձայ վարձատենեակս՝ պատրաստութիւններս տեսնելու որ յաջորդ օրը տունս դառնամ։ Քովս տալարի մը կոտորակները միայն մնացի էին։ Հետեւեալ առաւօտ երբ նախաճաշի նըստելու վրայ էի, ծառան իմացուց որ ղեռատի փակին մը կը փափաքէր զիս տեսնել հիւրանոցին մէջ։ Նէ դուստրն էր իմ գոլէճի ընկերիս, սա գերազնիւ բարեկամիս որ փաթէնթներու Քոմիտէին էր։ Նէ իր հօրը թոյլատուութեամբը և իր իսկ զեղուն ուրախութեամբը եկած էր ինծի աւետելու թէ Հեռագրի աղբւսագիրս հոսք գրած էր ինչ գէշերէն Մերակոյտի շրջանին փակուելու բողէն։ Այս եղաւ Ամերիկայի մէջ հեռագրի գիւտին դարձակէտը։ Եւ իբրեւ ճանաչում ու պատշաճ փոխարինութիւն մը անոր համակրութեանն ու ազնուութեանը — հա-

մակրութիւն մը՝ որ կին մը միայն կրնայ արտայայտել — խոստացայ իրեն որ Ուաշինկթընէ ի Պալթիմոր հեռագրական առաջին գծին վրայ առաջին հեռագիրն ինքը պէտք է պատրաստէ, որուն պատասխանեց. «Ես քու խօսքիդ կը հաւատամ և կ'սպասեմ»։ Այն ժամանակէն իբր տարի մը ետքը դիժը լմնցաւ. և ամէն բան պատրաստ ըլլալով՝ իրողութիւնը իմացուցի ղեռատի բարեկամիս, որմէ այս հեռագիրը պարունակող նոթն եկաւ. «Աստուած ինչե՛ր ըրաւ»։ Ասոնք էին առաջին բառերն որ անցան ելեկարական թելերու վրայէն, Ամերիկայի մէջ, առաջին կատարնալ գծին վրայէն։ Ոչինչ կըրնար ընտրուած ըլլալ իմ զգացումներուս աւելի համաձայն։ Անիկա մկրտեց Ամերիկեան հեռագիրն իր հեղինակին անունովը։ Անիկա դրաւ յաջողութեան և պատուոյ պսակը ուր որ անկ էր»։

Ամերիկայի մէջ ելեկարական հեռագիրն երբ ընդհանրացաւ, առաջին մեծ աղէտը որ հաղորդեց՝ Արքահամ Լինքըն հաղուադիւտ Նախագահին զարնուիլն էր, և յօրէ անտի այդ զարմանալի գիւտը եղած է միջոց թէ՛ չարիքի և թէ՛ բարիքի լուրերուն հաղորդուելուն։ Հոս աւելորդ կը նկատեմ հեռագրին կարեւորութեան և օգուտներուն մասին խօսիլ։

Վան Զ. Ս. Դ.

ՄԱՐՁՈՒԱՆԻ ԽՈՒԼԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒ ՔԻՆԿ ՍՔՈՒԼ ՎԱՐՃԱՐԱՆԸ

Մարզուանի միսիոնարները քանի մը տարիներէ ի վեր զգացած են պէտքը այնպիսի միջոցներու, որոնցմով կարելի ըլլար Թուրքիոյ խուլ-համբերուն կրթութիւն կամ ուսում մը տալ։ Օսմ. կայսրութեան մէջ այս դժբախտներէն առ նուազն 15,000 մը կայ, որոնց կեանքերը անբացատրելիօրէն խեղճ են ու գթաչարժ։ Ամերիկացի բարեկամներու համակրութեամբ ու միջոցներով կարելի եղաւ 1910ի Սեպտեմբերին խուլերու համար վարժարան մը բանալ Մարզուանի մէջ։

Առաջին տարուան ընթացքին հազիւ երեք Յոյն ուսանողներ գտնուեցան, և 1911ի աշնան վեց Հայեր ալ աւելցան այս թիւին վրայ։ Այս մանուկներուն կարգալ, գրել, պարտէզի և տունի գործեր կը սորվեցուն և տղաքն ատաղձագործութիւն ալ կը սորվին։

Խուլերը քանի որ մանկական տարիքի յատուկ շատ մը առանձնաշնորհներէ ու հաճոյքներէ զուրկ են՝ յաճախ կախերես և յամառ կ'ըլլան և բռնասիրութեան մասնայատուկ նշաններ կը ցուցնեն։ Հաստատամիտ ու միեւնոյն ատեն քաղցր վար-

մունքի մը շնորհիւ Քինկ Աքուլի ուսանողները պարզ ու առողջ կենցաղ, կանոնաւոր զբաղում ունեցող տղաքներ ու աղջիկներ ըլլալ կը կարողանան, և աստիճանաբար կը կորսնցնեն իրենց նկարագիրներուն կոշտ գիծերը՝ այն համեմատութեամբ որով կը սորվին թէ իրենք ալ ուրիշ մարդոց պէս կ'ըլլան:

Դպրոցին վարիչները պիտի փափաքէին ունենալ հասցէները այս երկրին ամէն կողմերը զբառնող այն ծնողաց որոնց զաւակները կրնան թերեւս ուսանող ըլլալ Քինկ Աքուլի: Վարժարանին վարիչները ուրախ պիտի ըլլան, եթէ այս տողերուն ընթերցողներն ալ գործակիցին այդպիսի ծնողքներուն տեղեկութիւն տալով այսպիսի խուլ մանուկներու ազգութեան, տարիքին և մտաւոր վիճակին մասին, միևնոյն ատեն նշանակելով նաեւ թէ կը լսեն, կամ թէ կրնան խօսիլ, Մանկան մը տարեթոշակն է 12 Օսմ. ոսկի: Վարժարանը Ամերիկեան վարչութեան տակ է: Այսպիսի տղաք իբրեւ ուսանող դեռ Մարզուան չբերուած՝ կարեւոր է անոնց մասին թղթակցել պէտք եղած կարգադրութեանց համար:

Վարժարանը պիտի բացուի 1912 Սեպ. 11ին (ն. Տ.):

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ

Miss CHARLOTTE R. WILLARD,
Anatolia Girls' School,
Marsovan, Turkey.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՈՒՐՔԸ

(Շք. նախորդ իւրէն և վերջ)

Յօդ. 4. Զինուորացրութեան 118րդ յօդուածին համաձայն Նիզամիէ զինուորներէն ծառայութեան փոխարէն (պէտէլ) անուելիք յիսուն ոսկին վաթսունի բարձրացած է և Բէտիֆներուն ու Իւթիաթներունը՝ երեսունէն քառասունի: Յօդ. 5. Աղի պետական տուրքին վրայ իւրաքանչիւր քիլոյին տասր փարա աւելցած է, սակայն Մուսուլի, Պաղատտի, Պասրայի, Հիճազի, Եմէնի ու Ափր. Տրիպոլսոյ նահանգաց մէջ և սահմանազրուխի այն տեղերը ուր աղերը ընդհ. զինէն պակասի կը ծախուին, կառավարութեան կողմէ ծախուած աղերը բոլորովին զերծ պիտի մնան յաւելումէն: Կարգ մը ազահանքերու մէջ քիլօն 24 փարայի ծախուած աղերու պետական տուրքին վրայ ալ երկու փարա պիտի աւելցուի: Մեծաքանակ աղ գնողները այս կանոնագրին հրատարակութեան միջոցին իրենց ունեցած աղերուն յաւելուածական տուրքը պիտի վճարեն: Հակառակ պարագային անոնց բոլոր աղերը պիտի զբաւուին, իբրեւ պատիժ: Յօդ. 6. Օղիի պատրաստութեան համար գանձուած պետական տուրքը կրկնապատկուած է: Յօդ. 7. Շէնքերու, հողերու և թէմէթթիւի տուրքերուն յաւելումը պիտի գանձուի Բ. մասնավճարէն սկսեալ և իւրաքանչիւր մասնավճարի մէկ քառորդ աւել-

ցնելով: Ամաթոշակներու տուրքերն ալ պիտի գանձուին այս կանոնագրին հրատարակուելու ա-միսն ալ հաշուելով նոյն ամսուան վերջաւորութենէն սկսեալ, իսկ միւս յաւելումները՝ կանոնագրին հրատարակուելու թուականէն սկսելով: Յօդ. 8. Ելեւմտական նախարարութեան անկ է այս կանոնագրին գործադրութիւնը:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ելեւմտից նախարար ձավիտ պէյ այս տարուան պիւնտէի մասին խօսած երկրորդ ճառին մէջ շատ դառն ճշմարտութեան մը արտայայտութեամբ լռեցուց այն կարգ մը մոլեռանդ երեսփոխանները, որոնք այս կայսրութեան յետամնացութեան ամբողջ պատասխանատուութիւնը վարժուած են միշտ Եւրոպայի վրայ նետելու: Ազգայնական անձկամըտութեան մարմնացումն եզոզ կարգ մը ծանօթ և անձանօթ անձեր Սահմանադրութեան հոշակման օրէն սկսեալ օտարատեցութեան սերմեր սկսան ցանել ժողովուրդին մէջ, կարծելով թէ հոս ալ գտնուէ այնքան պատրաստ հող կը գտնեն իրենց դաղափարներուն համար, որքան ժամանակ մը իրենց նմանները կը գտնէին Զինաստան, որ այժմ Հանրապետութեան մը բարիքները վայելելու կը ձգտի իրերու բնական բերումով այս անձերը կը շոյէին միշտ իրենց ազգակիցներու կամ կրօնակիցներու ստորին միտումներն ու նահապետական նախապաշարումները և այդպիսով իրենց համար փառք ու համբաւ կը շահէին: Այսպիսի շփոթներ կան ամէն ազգերու մէջ: Անոնց տրամաբանութեան համաձայն Օսմ. կայսրութեան դժբախտութեան, ժողովուրդին ազիտութեան, ազքատութեան, մոլեռանդութեան, յետամնացութեան, ևն. ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ օտարներուն վրայ: Անոնք կը կեղեքեն Օսմ. տարրերը, անոնք կը խլին մեր երկրին հարստութիւնները, անոնք կը սահմանափակեն մեր երկրին հասոյթները, անոնք են պատճառը բոլոր ներքին խռովութիւններուն, ո՛ւր որ ալ ծագին անոնք: Օսմ. կայսրութիւնը զբախտ մըն է, օտարականներն են զայն իր զաւակներուն համար դժոխք դարձնողը: Այս տրամաբանութիւնը այնքան արարածուած և ընդհանրացած է, որ նոյն իսկ թուրք և ուրիշ ազգերէ ծանօթ Օսմանցիներ կը սիրեն այս միտքերը շրջանակին մէջ բոլորի և ուրիշներուն ալ զայն ներշնչել: Տարի մը առաջ նոյնիսկ այսօրուան Ելեւմտական նախարարը այս դաղափարներուն ջերմապէս փարած էր: Բայց փորձատուութեան դասը, ինչպէս ամէն խելահաս անհատի, նոյնպէս ալ մեր տաղանդաւոր պերճախօս նախարարին վրայ շատ բարեբար ազդեցութիւն ըրած է և ան ճշմարտութիւնը խոստովանելու քաջութիւնն ունեցաւ յայտարարելով, ձեթէ կ'ուզէք որ օտար պետութիւն-

ներ վերցնեն. +աբխիւն-լատիները ինքնաբերաբար, պէտք է որ Օսմ. կայսրութեան ամէն անկիւններուն մէջ կատարեալ ապահովութիւն, արդարութիւն ու զարգացում ու բարգաւաճում տիրապետեն): Մեր նպատակը բնականաբար երբեք օտարները պաշտպանել չէ, բայց օտարներուն հայհոյելով չէ որ Օսմ. կայսրութեան և անոր զանազան տարրերուն շահերը կը պաշտպանուին: Մինչեւ որ այս երկրին մէջ ճշմարտութիւնը տեսնելու, խօսելու և ըստ այնմ կեանքի պէտքերուն անկեղծօրէն գոհացում տալու ձգտումը կատարելապէս յարմատանայ և արեւելեան կեղծիքին ու ստապատիր մեթոտներուն վերջ մը չտրուի, հարկաւ իրական զարգացում և յառաջդիմութիւն անկարելի է տեսնել: Այսօր դեռ բազմաթիւ գիւղեր ու քաղաքներ կան ուր զլիարկաւորներուն ետեւէն «կեալուր» ըսելով քար նետելու սովորութիւնը պահպանուած է դժբախտաբար, ժողովրդական այսքան տգիտութեան մէջ կարելի է միթէ լրջօրէն մտածել +աբխիւն-լատիներու բարձունքին մասին: Ո՞րչափ նահանգներ ունինք ուր, մանաւանդ ճամբորդներու համար, բացարձակապէս ապահովութիւն չկայ. ո՞րչափ դատարաններ ու դատաւորներ ունինք, որոնք արդարութեան գաղափարը հասկնալու կարողութիւնը չունին և ամէն գործ իրենց անձնական շահի և կրօնական մօլեռանդութեան տեսակէտով միայն կը դատեն ու այդպիսի վճիռները աստուածային արդարութիւն կը համարին: Եթէ ազգ մը կ'ուզէ լրջօրէն յառաջդիմել պէտք է որ իր թերութիւնները տեսնելու և խոստովանելու առաքինութիւնն ունենայ: Հակառակ պարագային ամէն տեսակի յառաջդիմութեան առջեւ անյաղթելի պատուար մը քաշուած կ'ըլլայ արդէն:

Աւելի որոշ խօսինք, 30—40 տարի առաջ Պուլկարիան այս կայսրութեան մէկ նահանգն էր, հոն ալ կային +աբխիւն-լատիներ նոյնիսկ այդ երկրին ինքնավարութիւն ստանալէն ետքը: Եւրոպական տէրութիւնները ուրախութեամբ և ամենայն պատրաստակամութեամբ հրաժարեցան իրենց առանձնաշնորհումներէն՝ նկատելով թէ անոնց գործադրութիւնը այլեւս կատարելապէս աւելորդ դարձած էր, քանի որ Պուլկար ոստիկանութիւնն ու արդարադատութիւնը օտարականն ալ կրնար ամէն կերպով ապհովցնել և գոհացնել: Մենք փոխանակ Պուլկարիոյ հետեւած ուղիղ ճամբան տեսնելու և անոր հետեւելու, կը յարձակինք Եւրոպացիներու վրայ, որ մեզ կը կաշկանդեն: Մենք կ'ուզենք մեր բոլոր ախաւաւոր սովորութիւնները պահպանել և Օսմանցիներն ու օտարականները մեր քմահաճօքին գործիք դարձնել: Առանձնաշնորհեալ և ոչ մէկ ազգ այդ ուղղութեամբ յառաջացող թուրքիոյ մէջ իր արտօնութիւններէն պիտի հրաժարի: Մեր

վարիչները ժամանակ մըն ալ Պատրիարքարաններու ետեւէն ինկած, անոնց առանձնաշնորհումները կ'ուզէին գրչի մէկ հարուածով ջնջել: Ըսելով թէ անոնք պետութեան մէջ պետութիւններ կը կազմեն և պետութեան գործերուն կը միջամտեն: Մեր մէջ ալ կային միամիտներ, որոնք կը կարծէին որ այսպիսի պահանջներ ներկայացնողները իրենց պէս համամարդկային տեսակէտներով կ'առաջնորդուին տեսականապէս և ասոր համար սկսան բուռն «պրոպականդ» մղել Պատրիարքարաններու արտօնութեանց դէմ: Ճավիտ պէյի մեծ պետութեանց +աբխիւն-լատիներուն համար ըրած խօսքերը մենք կրնանք կրկնել Պատրիարքարաններու արտօնութեանց համար: Թող կառավարութիւնը կատարեալ ապահովութիւն ներմուծէ բոլոր նահանգներուն մէջ, թող ան արդարութիւնը գործադրէ երկրին ամէնէն հեռաւոր անկիւններուն մէջ անգամ, թող ամէն մէկ անհատի խղճի ազատութիւնը յարգուի կատարելապէս, թող կրթութեան ու դաստիարակութեան, աղատ խօսքի և մամուլի ու գիտութեան, ընկերակցութեան և սրբապականգի առջեւ նեղ սահմաններ չքաշուին, այն ատեն ո՞ր Պատրիարքարանը հնարաւորութիւն պիտի ունենայ իր առանձնաշնորհումներու խօսքն ընել: Անոնք ըստ ինքեան մեռած տարր պիտի մնան: Նախարարին խօսքերը շնորհաւորելի են: Բայց դժբախտաբար երբեք չպիտի կրնանք իրեն գաղափարակից ըլլալ, երբ կ'ըսէ թէ 4—5 տարուան մէջ անկարելի էր կառավարութեան համար դրական արդիւնք մը ցուցնել: Երբեք չենք կրնար հաւատալ, օրինակի համար, որ կառավարութիւնը չպիտի կարենար այս 4—5 տարիներու մէջ լրջօրէն փափաքելով հանդերձ ապահովութիւնը վերականգնել արեւելեան նահանգներուն մէջ: Չպիտի հաւատանք թէ կառավարութիւնը անկարող էր հողային խնդրին մէկ մասը լուծել, թէ կառավարութիւնը անկարող էր ազդային կալուածներու շուրջ անտեղի խնդիրներ չյարուցանել, թէ կառավարութիւնը անկարող էր խեղճ աղջիկներու ու կիներու առեւանգիչները խստիւ պատժել, թէ կառավարութիւնը անկարող էր, փոխանակ բոլոր տուրքերը աղքատ ու միջին դասակարգերէ զանձելու, հարուստներուն ալ վրայ բեռցնել: Չենք հաւատար նոյնիսկ թէ կառավարութիւնը անկարող էր կրթական, հանրօգուտ շինութեանց և նոյնիսկ ընկերական ու կրօնական լուրջ բարեփոխումներու ձեռնարկել: Ահա թէ ինչո՞ւ համար դեղեցիկ խօսքի և իրական կեանքի հակասութիւնը ամէնէն ուշադրաւ դժբախտութիւնը կը կազմէ Սահմանադրական բէժիմին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն Ե Ր Ք Ի Ն

Օս. Բ. Խորհրդարանը. Անցեալ հինգշաբթի Երեւոյ. Ժողովը վերսկսաւ ելեւմտացոյցին քննութիւնը և երկար վիճարանութենէ մը ետեւ որոշեց որ այսուհետեւ ելեւմտացոյցը ներկայացուի մանրամասնութիւններ պարունակող ցուցակներով. Ապա քուէարկեց Հանր. Պարտքի ելեւմտացոյցին անձնական թոշակներու վերաբերեալ յօդուածները 32—40բ), յետաձգելով հանգստեան կոչուածներու և պաշտօնականներու մասը: Քուէարկեց նաև կայս. գերդաստանի թոշակներուն (502,400 ռսկի) վերաբերեալ 45րդ և 46րդ յօդուածները: Շարաթ Երկրագործական նախարարը, հրաւիրուած ըլլալով անդեկութիւն տալ Երկրագործական Դրամատան գործառնութիւններուն և երկրագործներու արուած զիւրութիւններուն վրայ, ըսաւ թէ հաստատութիւնը 23 տարի առաջ հիմնուեցաւ: Փոխատուութիւններու նուազագոյն չափն էր ի սկզբբան 5,000 դահ. և առաւելագոյնը 15,000: Փոխատուութիւնը կ'ըլլար հսկային կամ կալուածային աւանդներու փոխարէն: Բայց յետոյ փոխադարձ երաշխաւորութեան սկզբունքն ընդունուեցաւ և 300է մինչև 1,000 դահ.ի փոխատուութիւն եղաւ գիւղացիներու: 1323ի փոխատուութիւններուն համազուտման է 78,167,000 դահ. և զանձուններունը 55 միլիոն, իսկ 1327ինն է 120 և 95 միլիոն, որմէ կը տեսնուի գործառնութիւններուն համեմատական աճումը: Հաստատութեան այժմու դրամազուտիւն է 6 միլիոն ռսկի, որու 4½ — 5ը փոխատուութեան կը գործածուի: Նախնական դրամազուտիւն էր 11 միլիոն, բայց հին ըէժիմի կառավարութիւնը չվերադարձուց 4½ միլիոն ռսկին զոր առաւ Թուրքեյունական պատերազմին առիթով: Անասուններու բարեկալման հարցին դառնալով, նախարարն ըսաւ թէ անասնաբուժարանի հաստատումը 325ին սկսած է մեր երկրին մէջ 3—6 անասուննոց բուժարաններով, որոնք արժանի չեն այս անուան: Ուղուեցաւ առ նուազն 30, ապա 10 անասուննոց բուժարաններ հաստատել, բայց ինչ վարկ որ խնդրուեցաւ՝ չարուեցաւ: Այժմ գտնուածներն են 9 յովատակ և 30 ցուլ (Սէլանիկ), 5 և 6 (Գոսովա), 8 և 6 (Գոնեա), 5 (Սըվազ) և 9 (Էրզրում), ևն.: Համադուտը 97 և 161, որ անշուշտ անբաւական է մեր պէտքին: Ֆրանսա, որու հողային տարածութիւնը մերին 1/5ն է, ունի 3,500 յովատակ: Սակայն ինչ կարելի է ընել առանց

վարկի: Բացարուծութիւնը բաւական համարուեցաւ Ալպանական խնդրին վրայ Ներքին գործերու նախարարութեան կողմէ արուելու բացատրութիւնը յետաձգուեցաւ նախարարին հիւանդութեան պատճառով: Այրած թաղերու բնակիչներուն ընտրական իրաւունքի օրինագիծը Մերակոյտին կողմէ եղած բարեփոխումներով ընդունուեցաւ: Ապա ընդհանուր վիճարանութիւն մը սկսաւ Ելեւմտական նախարարութեան ելեւմտացոյցին վրայ, և քուէարկուեցան 52—60 յօդուածները 56,000 դահ.ի յաւելումով մը, որ եղաւ քննիչներու թոշակին յատուկ 54րդ յօդուածին վրայ: Երկուշաբթի քուէարկուեցաւ ելեւմտացոյցին 61րդ յօդուածը, որ կը վերաբերի անասուններու տուրքին և նախարարը խոստացաւ զալ տարի 700,000 դահ.: զեղչել այդ տուրքէն: Ապա Ներքին գործերու նախարարը իր բացատրութիւնը տուաւ սապէս. Իփէքի դէպքը Մայիսի վերջին գիշերը սկսաւ 500 հրոսակներու նոյն քաղաքին վրայ յարձակմամբ: Կայս. զօրք սակայն յաջողեցաւ Սթէնիք մտնել և Յունիս Դին Իփէք-Եաքովայի ձամբան և Յունիքի ու Սթէնիքի բարձունքները աւազակներէն մաքրել: Սպանեալներու թիւը եղաւ 201 միայն: Ապստամբները զգալով որ Իփէքի կողմը ձախողեցան՝ անցան Վուլչէթիին, Իսա Պոլաթին, որ անցեալ տարի Կայսերի Գոսովա այցելութեան միջոցին ներման արժանացաւ, իր գիւղը գնաց և նոյն չըջանի մարդիկը ըմբոստութեան զրդեց: Սակայն խաղաղութիւնը դարձեալ վերահաստատուեցաւ և փութով ձամբայ պաշտօնատուն և դպրոց կը շինուի Ալպանիոյ մէջ: Յարզ ծախսուած է 5,000 ռսկի: Մալտիոյ մէջ եւս խաղաղութիւն կը տիրէ: Յունիս 23էն ի վեր, երբ 400 հրոս հաւաքուած էին և Տրաքի կառավարիչը տեղեկագրեց թէ 1,500 Մալտիոսը հաւաքուած են և վախ կայ որ յարձակում գործեն: Ապա նախարարը խստիւ քննադատեց ու պախարակեց լեռը ելող զինուորականներու և Ալպանացի երեւելիներու յայտարարութիւնները, որոնց համաձայն ներկայ կառավարութիւնն է բոլոր խոտվութիւններուն և չարիքներուն պատճառը: Քանի մը երեսփոխաններ, ընդհանրապէս Ալպանացի, խստիւ ընդդիմախօսեցին, Ալպանական խնդրին բուն պատճառ ցուցնելով Հատինբէն տառերուն արգելումը և զէնքի բռնի հաւաքումը, մինչ Մալտիոսներ կ'արտօնուին զէնք կրել և Միրաթիներու զէնք կը բաշխուի, ևն.: Այս դիտողութիւններուն ալ պատասխանեց նախարարը և ի վերջոյ բաւ համարուեցաւ իր բացատրութիւնը և նիստը փակուեցաւ ժամը Դին: Երեքշաբթի քուէարկուեցան ելեւմտացոյցին

60րդէն մինչև 74րդ յօդուածները ինչ ինչ յաւել-
 լումներով և յայաւումներով, Ապա նախաքննու-
 թեան յղուեցաւ զինուորականները քաղաքակա-
 նութեամբ զբաղելէ արգելող օրինադիժը, որ Մե-
 րակոյտէն վերադարձուած էր ընդարձակ բարեփո-
 խումներով, և ընդհանուր վիճարանութիւն մը ե-
 դաւ հաշուակալութեան զիւանի ելեւմտացոյցին
 վրայ, Զօրեքշարթի այս քուէարկուեցաւ ինչ ինչ
 բարեփոխումներով, և զրեթէ անփոփոխ ընդուն-
 ուեցաւ պատերազմի տուրքի օրինադիժը, զոր
 հրատարակած ենք արդէն, Միայն երկու նոր յօդ-
 ուածներ աւելցուեցան անոր վրայ:

Մայրաքաղաք. Պատերազմական նախարար Մահ-
 մուտ Շէվքէթ փաշա երեքշարթի իրիկուն հրա-
 ժարեցաւ յոգնած ըլլալով և փափաքելով որ նոր
 նախարարի մը ձեռամբ գործադրուի զինուորա-
 կանները քաղաքականութեամբ զբաղելէ արգելող
 օրինադիժը, զոր ինք առաջարկեց ու քուէարկել
 տուաւ Խորհրդարանին Վեհ. Սուլթանը Մերակու-
 տական անուանեց զայն և Մով. նախարար Խուր-
 շիտ փաշայի յանձնեց առժամորար Պատերազմա-
 կան նախարարութիւնը: — Մանասթըրի պահես-
 տներու քննիչ Հիլմի փաշա Զ. զօրարանակի
 հրամանատար անուանուեցաւ և անոր յաջորդեց
 Իզմիրի պահեստներու հրամանատար Զէքի փա-
 շա: — Սուլթանից Վարժարանի ամսվերջի հան-
 դէսը կատարուեցաւ և 24 հոգի չըջանաւարտի
 վկայական, 32 ալ վկայագիր ստացան: — Իթթի-
 հատի բոլոր մասնաճիւղերուն հրամայուեցաւ տո-
 մարներէն ընչել զինուորական անդամներու ա-
 նունները: — Երկրագործութեան զարգացման նպաս-
 տողներու յատուկ պատուանշան մը հաստատուե-
 ցաւ երեք կարգով: — Նախկին սպարապետ Բի-
 զա փաշա երկու սուառնակ նուիրեց բանակին: —
 Ներքին գործերու նախարարութեան խորհրդա-
 կանը Անգղիացի պիտի ըլլայ, եթէ հարկ եղած
 վարկը քուէարկուի:

Նահանգներ. Անցեալ չարթու Իսա Պոլաթին ծանր
 պարտութիւն մը կրեց: Ծակատամարտը երեքշար-
 թի իրիկուն սկսաւ Ենիպազարի ճամբուն վրայ,
 քիչ յետոյ տարածուեցաւ Միթրովիցայէ մինչև Պո-
 լաթին գիւղը: Պոլաթինէ, Լարէ, Կոթաքէ և Տրէ-
 նիցայէ 3-4 հազար Ալպանացիներ և Փրիշթինացի
 Հասան ու Զէյնուլլահ պէյերը մասնակցեցան ճա-
 կատամարտին և զինուորները թնդանօթ գործա-
 ձեցին: Ծակատամարտը տևեց 13-17 ժամ: Մեռ-
 եալներ ու վիրաւորներ Միթրովիցա փոխադրուե-
 ցան սալերով, աշտարակներ ռաբակոծուեցան ու
 քանդուեցան և ապստամբները ցիրուցան եղան:

Ուրիշ ծանր կոիւներ զանց կ'ընենք: Պաշտօնա-
 պէս կը հետադրուի թէ Եքոտրայի և Էլպասանի
 զինուորներն ալ Ազլէ Հյասար մտած են յաղթա-
 նակով և Թիրանի ճամբաները բաց են: Սէլանիկի
 թերթ մը կ'ըսէ թէ բանազնաց պատուիրակու-
 թիւնը վերադարձաւ և թէ ըմբոստները խեղճ վի-
 ճակի մէջ են ու կը զղջան: Իսկ օտար թերթեր
 շատ ծանր կը տեսնեն կացութիւնը և շատ անհաշտ
 ու սպառնական՝ ըմբոստներուն դիրքը: Ետնիքի
 խզուած հեռագրաթիւերը կը նորոգուին: Ըմբոս-
 տութեան կեդրոններէն Սթոքի մէջ կառավարական
 շէնք մը սկսաւ: Մանասթըրի Պրանճա գիւղէն ու-
 մանց քով 5½ և 3½ քանոց տինամիթ և 4½ քաշ-
 նոց պատուգաւոր ուժանակ գանուեցաւ, և մար-
 դիկը ձերբակալուեցան: — Կարկուտի աւերներ կը
 ծանուցուին գաւառային շատ քաղաքներէ: — Անց-
 եալ չարթու Սէյիտ Իսրիսի մարդիկը կառավարու-
 թեան հաւատարիմ զիւղերու վրայ երեք անգամ
 յարձակած և ետ մղուած են: — Պաղատի չըջա-
 նակէն Պարսիկները կը վտարուին: — Ատանայի
 շուկային մէջ 15 խանութ այրած են: — Ծարաթ
 Կարնոյ մէջ սաստիկ անձրեւ տեղաց և լեռներու
 վրայ ալ ձիւն: — Հնոտախոր սկսած է տարածուիլ
 Էնկիւրիւ, Գարահիսար, Տէվէլու և Այվազ գա-
 ւառակներուն մէջ:

Աւեր. Ժող. Յունիս 16ին Մարտուանի Անաթո-
 լիա Գոլէճին մէջ զմայլելի նուագահանդէս մը
 արուած է նոյն հաստատութեան քսանուհինգ ամ-
 եակին առիթով: Նոյն օր Թալասի աղջկանց վար-
 ժարանի նոր շէնքին մէջ յիշատակի պաշտօն կա-
 տարուած է Վեր. Յ. Պիւլպիւրեանի համար: Յու-
 նիս 24ին աւարտած են Սըվազի Ամերիկեան վար-
 ժարաններուն ամսվերջի հանդէսները և 14 օրի-
 որդ և 13 երիտասարդ չըջանաւարտ եղած են: —
 Հեռուեալը կը հաղորդուի Այնթապի մեր թղթակ-
 ցէն. Վեր. Յ. Գ. Պիւլպիւրեանի մահուան յաջորդ
 կիրակին յիշատակի պաշտամունք մը կատարուե-
 ցաւ Գայաճըզ եկեղեցիին մէջ որուն հովիւը եղած
 էր հանգուցեալը քանի մը տարիներ: Երկու շա-
 բաթ առաջ Գայաճըզ եկեղեցիի երաժշտական
 խումբը նուագահանդէս մը տուաւ նոյն եկեղեցի-
 ին մէջ, որուն հասոյթը պիտի յատկացուի Կ. Թ.
 Գոլէճի աղքատ ուսանողներուն: Յունիս 16ի կի-
 րակին Այնթապի երեք եկեղեցիները միասին պաշ-
 տամունք կատարեցին Գայաճըզ եկեղեցիին մէջ,
 ուր Գոլէճի ամսվերջի քարոզը խօսեցաւ Վեր.
 Միպար Մնչերեան, Թալասի եկեղեցիին հովիւը, որ
 քսան տարի առաջ չըջանաւարտ եղած է Կ. Թ.
 Գոլէճէն: Բնարանն էր ըլնծմէ սորվեցէք: Յու-

նիս 17ին Կ. թ. Գոլէճի աշակերտաց մրցման խաղերու հանդէսը կատարուեցաւ Գոլէճիս բակին մէջ ահադին բազմութեան մը ներկայութեան ԅունիս 18ին Գայաճըզ եկեղեցիին մէջ կատարուեցաւ տեղւոյս Աղջկանց բարձր. Վարժարանի ամսակերպի հանդէսը ուր 23 օրիորդներ վկայական ստացան ԅառաջիկայ տարուան համար սոյն վարժարանը ընդունուելու ուղղութեամբ թիւը այնչափ շատ է որ տեղի անձկութեան պատճառաւ անոնցմէ մաս մը պիտի մերժուի ԅունիս 19ին Կ. թ. Գոլէճի սրահին մէջ կատարուեցաւ մրցման ատենախօսութիւններու հանդէսը, որուն մէջ 12 ուսանողներ ատենախօսեցին չորս տարբեր լեզուներով և երկու ուսանողներ ալ շարադրութիւններ կարդացին Թուրքերէն և Հայերէն լեզուներով ԅունիս 20ին Գայաճըզ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Կ. թ. Գոլէճի ամսակերպի և մրցանակաբաշխութեան հանդէսը, ուր տասնեւմէկ շրջանաւարտներ վկայական ստացան Անոնցմէ մէկը բացակայ էր հիւանդութեան պատճառաւ Հայէպի և Մարաշի մէջ հնտախտը սկսած է սաստկանալ, ինչ որ կը վախցուի թէ մնասակար պիտի ըլլայ Կիլիկիոյ Միութեան տարեկան ժողովին, որ պիտի զուամբուի ԅունիս 26ին — Խորհրդի Միութեան տարեկան ժողովն սկսած է անցեալ շաբթու. — Մըխալըճցի եղբայր մը կը գրէ թէ պատրաստ է Բիւթ. Միութեան առաքելական գործին համար 1 ոսկի տալ, պայմանով որ ուրիշ 19 անձեր եւս մէյմէկ ոսկի նուիրեն — Հանդուցեալ Մր. Ալէնի քոյր Միս Ալէն իր ծերունի հօր հետ Օզս. Ցին Ամերիկայէ պիտի մեկնի Թուրքիա գալու համար — Պրոսոյի Ամերիկեան աղջկանց վարժարանի շրջանաւարտներէն Օր. Արուսեակ Փափազեան կը փափաքի պաշտօն մը գտնել վարժարանի մը մէջ Դիմել ներսէսեան վարժարան Իճատիյէ, Իւսկիւտար — Յաւով կ'իմանանք Ատանայի աւետարանիչ Վեր. Պետրոս Թօփալեանի մահը, որ տեղի ունեցած է այս չորեքշաբթի օր

Հայ ժող. Վեճ. Կաթողիկոսին օժու մը վաղը տեղի պիտի ունենայ Պատրիարք Հօր ներկայացուցիչ նշանակուած է Թիֆլիզի փոխ առաջնորդ Տ. Եփրեմ Եպսկ. Պալաքեան վրդ. եւս Կարինէ Էջմիածին ուղևորած է Պատրիարք Հօր հրամանով — Մանթաշովի ժառանգորդները 10,000 բուպլ տուած են Թիֆլիզի Հայ Հրատարակչականին Իզմիրցի տիկին Ա. Աւետիքեան Գարշը Եագայի մէջ ազգին նուիրած է հասութարքեր կալուած մը Թագուր Էֆ. Պատրիզպանեան որոշած է քանի մը հազար ոսկի յատկացնել Սուլաւայի իր ծննդավայ-

րին մէջ դպրոցի մը հիմնարկութեան, և այժմէն Բերայի ազգ. մատենադարանին նուիրեց իր ճոխ գրատունը կը լսուի թէ Կաթողիկ Հայ մը կ'ուզէ 7,000 ոսկի նուիրել ազգ. տիպար մատենադարանի մը շինութեան համար Երչիլի Գարակէօզեան որբանոցին պարտէզը ընդարձակելու համար յարակից գետին մը (1,236 կանդուն) գնուեցաւ 1,415 ոսկի և առժամապէս Տիկին Վասիլուհի Գարակէօզեանի փոխանցուեցաւ ազգին անունով Երբանոցը դեռ պատրաստ չէ գործածուելու համար — Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միութիւնը որոշած է Տր. Տաղաւարեան Էֆ.ն Հայաստան զրկել, որպէս զի ուսումնասիրէ ժողովրդին պահանջները և պետական քննիչ յանձնաժողովի ուշադրութեան յանձնէ զանոնք, երբ ժամանէ այն — Պատրիարքարանի փուլու մը աւարտած է և նորին շինութեան ձեռնարկելու համար թագրիրով մը բացատրուեցաւ ձեռնհաս իշխանութեան թէ հրդեհի գէժ ապահովութեան միջոցներ ձեռք պիտի առնուին երկու կողմը քարէ պատեր շինելով, բայց ամբողջովին քարէ շինելու կարողութիւն կը պակսի և ուրիշ թագրիրով մը ստիպողապէս խնդրուեցաւ կասեցնել Խաթէօթի գերեզմանատան պեղումը, ուր ստանց նախագործարածութեան ձեռնարկուած է կառուղի շինել — Իսլահիյէի նոր կառավարիչը, որու գէժ բողոքները յաճախեցին Պատրիարքարանի և Բ. Դրան մտապաշտօնանկ եղաւ — Բաղէշի Ոզիմ գաւառակի սեփական արօտավայրերուն համար Թէնիսի գիւղի Բուրդերը Ոզիմի վրայ յարձակեցան և ընդհարման մը մէջ հինգ սպանեալ ունեցան Այսպիսի սոսնձութիւններ և անոնց հետեւանքով գործուած ոճիւններ կը տեղեկագրուին Բաղէշի և Կարնոյ շրջանակներէն, Սղերզի փոխ առաջնորդը կը գրէ թէ Ղարզանի նոր Գիւղի Սբ. Կարապետ վանքին կալուածները, արջանները և գոյքերը Բուրդերէն գրաւուած են Աղբակի Սբ. Բարթողիմէոս վանքին կալուածներն ալ կառավարութիւնը կը փորձէ գրաւել կալուածաթուղթերուն փճացումէն օգտուելով

ԱՐՏԱՔԻՆ

Զարին և Վիլնիւս կայսեր տեսակցութեանը նախապէս ծանուցուած այս այցելութիւնը անցեալ շաբթու վերջապէս տեղի ունեցաւ Ի Փորթ Պալթիկ որ Բէվալէ քիչ հեռու է դէպ արեւմուտք և կը կազմէ Փեթրոսպոլի-Պալթիկի երկաթուղին վերջին կայարանը Գերման Կայսրը անցեալ հինգշաբթի հոն ժամանեց Հոկտեմբերի 11-ը գրօսանաւով որով կ'ընկերանային Մոլեթէ յաճանաւը և լրատար նաև

մը, Չարը Չարուհիին հետ նոյն առաւօտ կանուխ հասած էր Միւնիւսթը զբօսանաւով: Երբ նշմարուեցան Գերման նաւերը, որոնց կ'ընկերանար Ռուս թնդանօթակիրներու տորմիզ մը, Փեթըրսպուրկի Գերման ղեսպան Մ. Փուրթալէս և ղեսպանատան նաւային ու զին. կցորդները նէվա զբօսանաւով ընդ առջ գացին: Եւ երբ Միւնիւսթը ողջոյնի նշանը տուաւ, Ռուս մարտանաւեր թնդանօթի 33ական հարուած արձակեցին, որոնց պատասխանեց Մ. Միւնիւսթը կայսրը Ռուս և Գերման զինուորներէն կեցցէնեւրով ողջուեցաւ, երբ Ռուս մարտանաւերուն առջևէն կ'անցնէր Հոնցուլըն, և Ռուս նաւային համազգեստով սանդուխէն ընդունեց Չարը, որ Գերման նաւային համազգեստ կը կրէր: Երկու վեհապետները սիրալիր ողջագուրումներէ ետեւ Ռուս պատուոյ գունդին առջևէն անցան և յետոյ երկար տեսակցութիւն մը ունեցան: Չարին մեկնումէն ետեւ կայսրը Չարուհիին այցելեց Միւնիւսթի մէջ և սեզանի հրաւիրուեցաւ: Սեզանին վրայ բաժակաճառ չխօսուեցաւ և ներկայ էին Չարուհիին և աղջիկներէն զատ երկու կայսրերուն վարչապետները և հետեւորդները: Յետոյ կայսրն հրաւիրուեցաւ այցելել Ռուս մարտանաւերը: Ընդունելութիւնը ցամաքի թէ ծովու վրայ սքանչելի էր: Բէվալէ 1.000 ուսանող եկած էր զբօսանաւով փայլ մը տալ զօրահանդէսին, Երեկոյին փոխադարձ հացկերոյթ տրուեցաւ Հոնցուլընի մէջ, հետեւեալ առաւօտ եւս Վիլպորկի գունդին սպանութուն: Չարը այցելեց Մ. Միւնիւսթը յաճանաւը և տեսակցեցաւ Գերման վարչապետին հետ, ինչպէս կայսրն ալ Ռուս վարչապետին ու ներկայ նախարարներուն հետ: Կէսօրին կայսրը սիրալիր կերպով հրաժեշտ առաւ Չարէն ու մեկնեցաւ: Երեկոյին եւս Չարը մեկնեցաւ Միւնիւսթի ողջ մէջի Ֆինլանտա, Այս այցելութեամբ Գերման կայսրը փոխադարձեց զայն զոր Չարը տուած էր ճիշտ երկու տարի առաջ ի Փոցտամ, Լրագիրներ շատ ենթադրութիւններ ըրին սոյն այցելութենէն թէ՛ առաջ, թէ՛ ետքը անոր հաւանական նպատակին և արդիւնքին վրայ: Բայց, ինչպէս կ'ըսէ թերթ մը, «խաղաղութիւն պիտի չըրէ այն, այլ պիտի աճապնդէ խաղաղութեան ընդհանուր քաղաքականութիւն մը, ինչ որ մեծ շահ է ինքնին» Փեթըրսպուրկի հեռագրական գործակալութեան ղեկոյցը կը յայտարարէ թէ «այս տեսակցութեան առիթով տեղի ունեցած խօսակցութիւնները, որոնց միջոցին ի նկատ առնուեցան այժմեական ամէն հարցեր, երկուստեք ամբապնդեցին սա համազգուցութիւն զբացի երկու պետութիւններուն ու ընդհանուր խաղաղութեան

համար ամենամեծ կարեւորութիւն ունի փոխադարձ շիտեմը պահպանել փոխադարձ վստահութեան հիմին վրայ: Նոր համաձայնութեան խնդիր չեղաւ, ոչ ալ Եւրոպական խմբակցութիւններու փոփոխման» Կիրակի Փեթըրսպուրկի Գերման ղեսպանը Փեթըրսպուրկ վերադառնալով հացկերոյթ տուաւ ի պատիւ Գերման վարչապետին: Ներկայ եղան նաեւ Ռուսոյ Դատական և Արտաքին գործերու նախարարները, Պերլինի Ռուս ղեսպանը և Գերման նաւային ու զին. կցորդներն ու ղեսպանատան պաշտօնէութիւնը:

Իսպաիս և պարսկացիք. Խտալական թերթ մը կ'իմանայ թէ 10.000 զինուոր ցամաք ելած են Մըրաթա, Տրիպուսէ 250 և Լէպտայլ 100 հզմթ. հետու ղէպ արեւելք: — Հոռոյ կը հեռագրուի թէ Սիտի Սաիտի առումը, որով կը խզուին Թուրքերու հազարակիցութիւնները Թուրքիան սահմանադիւրին հետ, 1.500 մեռեալ և 3.000 վիրաւոր արժեցանոնց բաց ի 500 զերեւաներէ և 1.000 հրացանէ, 100 անտուկ ռազմանիւթէ և մեծաքանակ պնչարէ զոր Խտալացիները հաւաքեցին կուռի դաշտէն: Չորոց կայ թէ Խտալիս մեծ տէրութիւններն հրաւիրած է պարտաւորել զԹուրքիս որ հաշտութիւն կնքէ, ապա թէ ոչ՝ պիտի ստիպուի Տարտանէլի վրայ յարձակիլ և առիթ տալ անոր վերստին փակման, որ կը վնասէ իրենց շահերուն: Արդարեւ տէրութիւններու Արտաքին գործերու նախարարներն ալ Օսմ. ղեսպաններու բացորոշ յայտնած են պատերազմին վերջ տալու իրենց փափաքը: Սակայն հաշտութեան դեմին մը գտնուած չէ ցարդ:

Հեռագրաւորքեր. Շարաթ իրիկուն արքայականները Սպանիական սահմանադուրէն Փորթուկալ անցնելով իտալութիւն յարուցին զիւղական համայնքներու մէջ, բայց զսպուեցան կատարելապէս: Բաւական մարդիկ ձերբակալուեցան, որոնց մէջ կան նաեւ չորս պարագլուխներ: — Յունաստանի ռազմափորձերը վերջացան և հաւաքուած 40.000 զօրաց 30.000ը արձակուեցան Թուրքիոյ կառկած չպատճառելու համար: — Եգիպտոսի մէջ դաւադրութիւն մը երեւան հանուեցաւ վարչապետին ու Լորա Քիչընըրի ղէմ: Չորս հոգի ձերբակալուեցան և երկուքը արձակուեցան: Դէպքին կարեւորութիւնը շատ չափազանցուած է: — Ֆրանսայի վարչապետ Մ. Փուանըարէ Օգս. Աին պիտի ժամանէ Փեթըրսպուրկ, 10ին պիտի ներկայանայ Չարին և 11ին այցելէ Մոսքուա և յետոյ զամնայ Փարիզ: — Անգղիա կապոյտ տեսակով մը հրատարակեց 1911 Դեկտ. մինչև 1912 Ապրիլ ամիսը Պարսկաստանի խռովութիւններուն վրայ տէրութիւններու միջև փոխանակուած բոլոր պաշտօնագրերը և հեռագրերը: — Պարսկաստան հաւանած է Ռուս երկու սպայի հրամանին ներքեւ երկու կիսաբամնի կազմութեան:

اورادار هفته لوق غزته — درسعادنده باييل هاوسده — مدير مسئول — صوميل ق . هاروتيويان

ՊԱՅՄԱՆՆԵՐ	
Յարեկ. Բանեղին	40 ԳԸ.
Ամբիկայի հար	2 Տու.
Արշիյ	8 շեկն
Ուրեշ Կը-	
Կրեկերու	10 Տր.
Ձեռքի հասը	40 Գուր
Մանուկան գրեկը լափաւոր	

ԱՒԵՏԱԲԵՐ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Խմբագիր
Վ. Եր. Տր. Փ. Ու. Մեքայլմ
Պայղը Հասու,
Կ. պրին, Թուրքիա

THE AVEDAPER
AN ARMENIAN WEEKLY
EDITOR
REV. F. W. MACALLUM, D. D.
American Bible House
Cons/ple, Turkey

TERMS	
An. Subscrip.	Ps. 40
U. S. A.	§ 2
England	Shils. 8
Other countries	Fr. 10
Single Copy 40 Paras	
Advertising rates on application	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈՐԻՋՈՆԸ. Գործաւորներու սպահովագրութիւն,
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Եկեղեցւոյ դործ, Գրիտոս մեր կեանքը,
ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ. Աւետարանը ամօթ չի
սեպել, Գրպանի ելեկարական ճիւղը,
ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ. Խուլերու ձայները, Տունի
ճանճը,
ՅՕԴՈՒԱԿԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱՍԻՆ. Վեր. Յակոբ Պիւլ-
պելեան, Յաջողութեան գլխաւոր տարրերը, Գրի. Գասա-
պոյէ, Աւաջին հեռագիրը, Մարգարանի խուլերու և համ-
բերու Գինկ Սըուլ Վարժարանը, Պատերազմի տուրքը,
Հայ կեանքը,
ՔԱՂԱՔԱԿԱՆ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ Ի ՊՐՈՒՍԱ

Յունիսի մէջ ընդունած ենք հետեւեալներն,
զորս կը հրատարակենք խորին շնորհակալու-
թեամբ. — Պատ. Խ. Վարդանան 170, Հաստա-
տութեանս զանձանակէն 47, Ն. Մոստիչեան էֆ.
50 հատ «Դիրք Առակաց Սողոմոնի», Վեր. Բ. Տո-
նիկեան 140, որոյ 52.20 օրդ., 38 քոյրերու
Ամանորի ազօթից ժողովէ, Յոյն եղբայր մը 19,
Մնունգի պնակի հասոյթ 32.20, Յակոբ էֆ. Սվաճ-
եան այցելութեան առթիւ 540, Վաճառումէ 20,
Սարգիս էֆ. Չարիֆեան 175 կրամ շերամի հունտ,
Վ. Յ. Տիւրիզեան ապաքինմանը առթիւ 108, Ե.
Մահճուպեան էֆ. 10, Միմարեան եղբարք 108,
Յ. Գապագճեան էֆ. 54, Փրոֆ. Յակոբեան 20,
Փրոֆ. Տաղեան 20, Յ. Սիվասեան էֆ. 20, Փրոֆ.
Կիւրեան 10, Փափազեան էֆ. 10, Թումեան էֆ.
7.20, Տնիկեան էֆ. 10, Գ. Ճիզմէճեան էֆ. 20,
Հասոյթ պատկերներու 20, Նոր Ձելանտայէ 235
և Աւստրալիայէ 325: Այսքան հեռուոր վայրերէ
ՍԻՐՈՅ ձեռքեր կթէ Արեւելեան Որբանոցի Հայ
Սանուհեաց օգնութեան կը հասնին, բուն մեր
Հայրենեաց զաւակներուն աւելի զիւրին պիտի ըլ-

լայնոյնը ընել, բաւ է որ ՍԵՐ ըլլայ: Մինչև ատա-
րեկու լս պէտք է շէնքը նորոգենք, եթէ ոչ ձմրան
մէջ կրնայ փչիլ. դրամի մեծ պէտք ու կարոտու-
թիւն կայ: Խիստ պէտք կայ նաեւ գոնէ մէկ հատ
դաստիարակ, եթէ ուսուցչուհիի, հաճիլ զիմ
ստորագրեալիս:

Գ. ՊԱՂՏԱՍՏԵԱՆ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Անպաշտօն մնացած քարոզիչներ և պաշտօնեայ
չունեցող եկեղեցիներ կրնան իրենց պէտքը Աւետար-
քեի իմացնել, և մենք սիրով պիտի նշանակենք
զայն Աւետար. Ժողի լրարամնին մէջ:

ՀՐԱԻԷՐ ՄԸ

Ե. Ք. Բ. ՈՒ ԱՆԴԱՍՆԵՐՈՒ

Ողիմպոս Լերան գագաթի կազմուրիչ օղը,
ջուրը և տեսարանները վայելիլու նպատակաւ
Պրուսայի Ե. Ք. Բ. կը ձեռնարկած է խուճի մը
կաղճակերպել: Պոլսոյ և շրջականերու երիտա-
սարդներուն այս առիթէն օգտուելու պատենու-
թիւն մը տուած ըլլալու համար մինչև ներկայ
Յուլիս ամսուան 21ի Կիրակի իրիկունը եղած զի-
մունքը նկատողութեան առնուելով կարգադրու-
թիւններ պիտի ըլլան: Պատասխան տալու համար
անհրաժեշտ է զրոշուած և հասցէն վրան գրուած
պանարան մը ներփակել, Դիմել առ Օ. Գ. Պաղ-
տասարեան, Պրուսա:

ՎՄՐՁՈՒ ՍԵՆԵԱԿ. Պատուաւոր տան մը մէջ
ի նշանթաշ (Թ. 10, Տիկէր Պէքճի փողոց):

Հոգեւոր պաշտամունք՝ վաղը, ժամը Յին (Բ.
Ե.), Կոստիկեան բնակարանի մէջ, Պոյաճըզիւղ
Պիտի խօսի Պատ. Կ. Յ. Բերդեան:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՈՅԱՃԵԱՆ

ՖԻՆԱՆՃԱԿԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ